

906

Պրոլետարիատ բոլոր յերկիրաների, միացե՛ք

Վ. Մ. ՄՈԼՈՏՈՎ

ՀԱՅՎԵՏՈՒ ԶԵԿՈՒՑՈՒՄ  
ԽՍՀՄ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ VII  
ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

354(47)  
Մ-86

24(Բ)Կ ԿԿ

ԿՈՒՍԴՐԱԾ

•

1935

354(47)  
U-86

60 MAR 2010

Պրոլետարիա բոլոր յերկնների, միացե՛ք

Վ. ՄՈԼՈՏՈՎ

ՀԱՅՎԵՏՈՒԻ ԶԵԿՈՒՑՈՒՄ  
ԽՍՀՄ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ  
VII ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ  
ԿԱՐԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԱՃԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

1935 թ. ՀՈՒՆՎԱՐԻ 28-ին

306  
ԱՀԱ

04.07.2013

I. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՅԵՐԿՈՒԻ ԳԻԾԸ

Թարգմ. Ա. Այվազյան  
Խմբ. Պ. Աղելյան

Տեխմ. խմբ. Տ. Խաչվանեյան  
Մրացրիչ Գ. Վահանեյան

Կուսհրատի տպարան  
Գլավիտ Ը-27, պատփեր 68  
Հրատ. 268, տիրութ 5000



4785  
39

4789-91

Վ. Մ. ՄՕԼՈՏՈՎ

ОТЧЕТНЫЙ ДОКЛАД О РАБОТЕ ПРАВИТЕЛЬСТВА  
VII СЪЕЗДУ СОВЕТОВ СССР

Ընկերներ, չորս տարի արանից առաջ Խորհուրդ-  
ների 6-րդ համագումարը հայտարարեց, վոր մեր  
յերկրում սոցիալիզմի հաղթանակի հարցը լուծված է  
և սոցիալիզմի հաղթանակը լիովին ապահովված է:  
Այդ հետևողությունը հիմնված եր այն բանի վրա, վոր  
արդեն այն ժամանակ ժողովրդական տնտեսության  
մեջ տիրապետող դիրք եյլն գրավել սոցիալիստական  
տարրեղը: Արգեն այն ժամանակ արդյունաբերության  
մեջ կապիտալիստական տարրեր համարյա չեյին մը-  
նացել: Աննշան եր նրանց դերը նաև առեւրի մեջ:  
Թուրացել եր նաև կուլակության դերը գյուղում:

Սակայն այդ ժամանակին գյուղացիների միայն  
մի յերրորդ մասն եր մտել կոլտնատեսությունների  
մեջ, իսկ գյուղացիների գերակշռող մեծամասնությու-  
նը դեռ մնում եր մենատնտես և կապված եր իր մտս-  
նալոր սեփականտիրական տնտեսության հետ: Բայց  
չե՞ վոր հայտնի յե, վոր մեր ազգաբնակության դըլ-  
իսավոր մասսան կազմում են գյուղացիները: Ուստի  
այդ ընթանում Խորհրդային Միության ազգաբնակու-  
թյան միայն փոքրամասնությունն եր, վոր անմիջա-  
կանորեն զբաղված եր սոցիալիստական տնտեսության  
մեջ:

Այդ ժամանակից ի վեր գրությունը փոխվել է:  
Սոցիալիզմը հակայական առաջընթաց կատարեց մեր  
յերկրում, սոցիալիստական իրավակարգն սկսեց ան-

բաժան իշխել ամբողջ ժողովրդական տնհսության մեջ։ Գյուղացիության համարյա չորս-հինգերորդ մասը մտավ կոլտնտեսությունները։ Հետևաբար, վոչ միայն բանվորները, այլև գյուղացիներն իրենց մասսայով մտան սոցիալիզմ կառուցողների շարքերը և իրենց ձեռքով կառուցում են սոցիալիստական հասարակություն։ Դրա չնորհիվ, այժմ արդեն անմիջական սոցիալիստական կառուցմամբ գրադապծ է մեր յերկրի ազգաբնակության գերակշռող մեծամասնությունը։ (Ծափեր)։

Այդ ե այս տարիների մեր դարդացման հիմնական հանրագումարը։ Այդ ե լենինյան կուսակցության և ամբողջ սոցիալիստական շինարարության ստալինյան դեկադարման հիմնական հանդակումարը։ (Ծափեր)։

Ինչպիսի առանձին գժվարություններ և թերություններ ել ունենա մեր շինարարությունը, վոչ վոքչի կարող ժխտել այն, վոր անցյալ քառամյակում յերկիրը տարեցտարի առաջ և գնացել ժողովրդի լայն մասսաների կյանքի պայմանների բարձրացման ու բարելավման ուղղով։ Ավելի լավ հնարավորություններ ու հեռանկարներ են բացվում մեր առաջ այժմ, յերբ աշխատավորների հիմնական մասսան յերես դարձրեց մասնավոր սեփականությունից և բռնեց սոցիալիզմի ուղին, վորն ապահովում է աշխատավորների աշխատանքի ամենի մեծ արտադրողականությունը և նրանց բարեկեցության ու կոլտուրայի մինչև այդ չորսնաված վերելքը։ Ահա թե ինչու այն հանրագումարը, վորը տալիս ենք մենք այժմ, հանդիսանում է վոչ միայն մեր յերկրի աշխատվորության պայքարի հաջողությունների, մեր շինարարության հաջողությունների լավագույն գնահատականը, այլ միենույն ժամանակ հեռանկարներ ե բացում Խորհրդային Միության առջև, հնարավորություններ ե ընձեռում մեզ ապագայի համար։

Սակայն մենք չենք կարող, առլրեյսով կապիտալիստական շրջապատռով, խոսել միայն մեր մասին և մեր շինարարության մասին։ Հասկանալի յէ, վոր մենք, այն ինչ տեղի յէ ունենում մեզ մոտ, համեմատում ենք այն բանի հետ, ինչ վոր կատարվում է կապիտալիստական յերկրներում։

Խորհրդային Սոցիալիստական հանրապետությունների Միությունը մի աշխարհ ե, վոր ապրում ե իր սեփական կյանքով։ Մենք մինչև այժմ ել զեռ միակ սոցիալիստական հանրապետությունն ենք, թեպետ նա նիստ ու կացի գգալի առանձնահատկություններ ունեցող մեծ ու փոքր շատ ժողովրդների, շատ ազգերի սոցիալիստական միությունն ե հանդիսանում։

Այլ աշխարհ են ներկայացնում կապիտալիստական յերկրները։ Այդ աշխարհն ապրում է մերինից տարբեր՝ սեփական կյանքով։

Վերջին տարիներն առանձնապես ցայտուն կերպով ցույց տվին, թե վորն է կապիտալիստական յերկրների գարգարման ներկանություններին։

Չորս տարի առաջ, խորհրդական կերպով մենք առիթ ունեցանք խոսելու համաշխարհային տնտեսական ճգնաժամի, այն խոր ճգնաժամի մասին, վորը համակել եր կապիտալիզմի բոլոր յերկրները։ Արդյոք դուրս յեկել են ճգնաժամից այդ յերկրներն այն ժամանակվանից ի վեր։ Վո՞չ, դուրս չեն յեկել։ Մենք վոչ թե կապիտալիզմի հակառակորդները լինելու պատճառով ե, վոր ահա արդեն վեցերորդ տարին է, առիթ ենք ունենում խոսելու տնտեսական այն ճգնաժամի ու զղագությունների մասին, վորոնք ցնցում են կապիտալիստական յերկրները։ Վոչ միայն կապիտալիզմի հակառակորդները, այլև նրա յերկրպատճերը չեն կարող ժխտել այն փառությունը են կապիտալիստական հասարակությունը և շարունակում ե բղիտել մինչև այժմ։ Ահա թե ինչու, կրկին ու կրկին ստիպված ենք այդ կապիտալի յերկրներում տիրող տնտեսական խոսել կապիտալի յերկրներում տիրող տնտեսական

Ժգնաժամի մասին, այն բանի մասին, թե վորքան ընկել է այդ յերկիների տնտեսությունը, թե վորքան սահմանափակում է այլուղի կուլտուրայի ասպարիզում կատարվող աշխատանքը, թե վորքան է սրվում պայքարը չահագործվող և չահագործող դասակարգերի միջև, թե վորքան է սրվում նաև ամբողջ պետությունների միջև տեղի ունեցող պայքարը և առում է պատերազմի վտանգը։ Տարունակ նորանոր փաստեր վկայում են, վոր ներկա տնտեսական ճգնաժամի առանձնակի ծանրությունը կարելի յե ըմբռնել միայն այն դեպքում, յեթե մեզ հաշիվ տանք, թե մեր աչքի առջե արդեն յերկրորդ տասնամյակն է, վոր ծավալվում է կապիտալիստական սիստեմի ընդհանուր ճգնաժամը, վոր ավելի ու ավելի յեն ուժեղ դանում կապիտալիզմի նեխման պրոցեսները։

Ճգնաժամն ընդդրկել է կապիտալիստական բոլոր յերկիրները։ Ճգնաժամ է ապրում վոչ միայն արդյունաբերությունը, այլև գյուղատնտեսությունն իր բոլոր ճյուղերով։ Ճգնաժամն անդրադարձավ այդ յերկիրների և՝ առևտորի, և՝ վարկի, և՝ տնտեսական կյանքի մյուս բոլոր բնակչափաների վրա։ Արդյունաբերական արտադրության մակարդակը յերբեք այնքան ցածր չի իշել, ինչպես վերջին տարիներս և անցյալում յերբեք չի իշել այնպիսի գրություն, վոր ճգնաժամը ձգձգվի հինգ տարուց ավելի։ Վերջին տարին եյական վոչ մի փոփոխություն չերեց տնտեսական ճգնաժամի զարգացման մեջ, թեպետ համաշխարհային արդյունաբերական արտադրության մակարդակը վորոշ չափով բարձրացել է՝ համեմատած անցյալ հետ։

Աչա մի քանի տվյալներ վերջին չըջանի արդյունաբերական ճգնաժամի շարժման մասին։

Արդյունաբերական արտադրանքի բանակը տվյալներով 1929 թվի նկատմամբ

Յերկիրներ	1929	1930	1931	1932	1933	1934
ԽՍՀՄ	100	130	162	185	202	239
Միացիալ Նահանգներ	100	81	68	54	65	67
Անգիալ	100	92	84	84	88	96
Դերմանիա	100	88	72	60	69	86
Ֆրանսիա	100	101	89	69	77	71
Իտալիա	100	92	78	67	74	80
Ամբողջ աշխարհը (առանց ԽՍՀՄ-ի)	100	85	74	62	71	76

Դեռ վոչ մի յերկիր չի հասել 1929 թվականի մակարդակին, յերե ճգնաժամը նոր եր սկսվում։ Ամերիկայի Միացյալ Նահանգներում արդյունաբերական արտադրությունը մինչև այժմ ել 33 տոկոսով ցածր է 1929 թվականի մակարդակից։ Ֆրանսիայում 1934 թվականին արդյունաբերական արտադրանքի մակարդակը նույնիսկ իշել է՝ համեմետած 1933 թվականի հետ և 29 տոկոսով ցածր է մինչճգնաժամային շրջանից, իսկ Իտալիայում 20 տոկոսով ցածր է այդ շրջանից։ Գերմանիան ցույց է տալիս արդյունաբերական արտադրանքի աճում 1934 թվականին, բայց այնուամենայնիվ Գերմանիայի արդյունաբերական արտադրությունը 14 տոկոսով ցածր է 1929 թվականի մակարդակից։ 1929 թվականին ամենից ավելի յե մոտեցել Անգլիայի արդյունաբերական արտադրությունը, անգայն այդուղի ել արդյունաբերությունը զեռ չի հասել նույնիսկ մինչպատճերակման մակարդակին։

1934 թ. փաստերը վկայում են, զանազան պետությունների արդյունաբերության զարգացման մեջ մեծ անհամաչափության մասին։ Յերկիրների մեծ առում արդյունաբերական արտադրանքի աճման ավելի կամ պակաս արտահայտված տենդենցիաների առկայու-

թյան առանձին գեղքերում անցյալ տարի ևս կային մակարդակի իջեցումներ (Ֆրանսիա) :

Ընդհանուր առմամբ համաշխարհային արդյունա-  
րերական արտադրանքի քանակը 1933 թվականի 71  
տոկոսից 1934 թվականին հասել է 76 տոկոսի : Այդ-  
պիսով համաշխարհային արդյունաբերական արտադ-  
րանքի քանակը դեռ 24 տոկոսով ցածր է 1929 թվա-  
կանի մակարդակից : Համեմատեցեք այդ գրությունը  
Խորհրդային Միության հետ, վորտեղ 1929 թվակա-  
նից արդյունաբերական արտադրանքի քանակն ավելա-  
ցել է 139 տոկոսով : (Ծափեր) :

Փաստերն ամբողջովին հաստատում են 17-րդ  
համագումարում արած ընկ . Ստալինի յեղակացու-  
թյունները : Արդյունաբերության մեծագույն անկ-  
ման, արդյունաբերական ճգնաժամի մեծագույն խո-  
րության կետից անցել են 1932 թվականին : Դրանից  
հետո ճգնաժամը թևակոխեց գեղքեսիայի շրջանը,  
բայց վոչ այնպիսի գեղքեսիայի, վորպիսին լինում  
եր նախկին արդյունաբերական ճգնաժամերի ժամա-  
նակ : Այն ժամանակ ճգնաժամի անցումը գեղքեռիա-  
յի վոչ միայն առաջին քայլն եր ճգնաժամի փոսից  
դուրս գալու, այլև արդյունաբերության նոր ծաղկ-  
ման նախապատրաստությունը : Այժմ մենք ունենք  
անցում ճգնաժամից գեպի յուրատեսակ գեղքեսիա,  
գեպի արդյունաբերական արտադրանքի վորոշ աճում՝  
միմիայն համեմատած արդյունաբերության անկման  
ծայրահեղ կետի հետ, յերս սակայն արդյունաբերա-  
կան արտադրանքի գոյություն ունեցող աճումը գեռ  
ցույց չի տալիս արդյունաբերական նոր ծաղկման վո-  
րելեն նշան : Այժմ մենք գործ ունք վոչ թե մինչպա-  
տերազմյան ժամանակվա արդյունաբերական գեղքեսի-  
այի հետ, յերս կապիտալիզմը ճգնաժամի միջով ընթա-  
նում եր գեպի նոր վերելք, այլ նեխվող կապիտալիզ-  
մին, իր վերջին աստիճանում գոնվող կապիտալիզմին  
հատուկ, յուրատեսակ մի ճգնաժամի հետ :

Մեզ համար առանձնապես կարեվոր է, թե ի՞նչ-  
պես անդրադարձավ այդ բոլորը բանվորների և գյու-

ղացիների գրության վրա, աշխատավորների գրու-  
թյան վրա :

Յեթե մինչև այժմ ել կապիտալիստական վոչ  
մի յերկրում արդյունաբերական վերելք չի նկատ-  
վում, ապա գործազրկության վիճակն ինքն է խոսում  
իր մասին: Գործազրուրկների թիվը 1933 թվականին  
հաշվում եր 22—23 միլիոն: 1934 թվականի վերջերին  
գործազրուրկների թիվը մոտական է նույն մակարդակի  
վրա, այսինքն՝ առնվազն 22 միլիոն հոգի: Նույնիսկ  
այն յերկրներում, վորտեղ վերջին տարում արդյունա-  
բերական արտադրանքն ավելացել է, աշխատավարձի  
ֆոնդը մնացել է մոտավորապես առաջվա մակարդակի  
վրա, կամ ավելացել է շատ աննշան չափով: Այդ նշա-  
նակում է, վոր աշխատանք ունեցող շատ բանվորների  
աշխատավարձն իջել է: Այդպիսով, կապիտալիզմը  
մտադիր է ճգնաժամից գուրս գալ ի հաշիվ բանվոր-  
ների, ի հաշիվ աշխատավորների:

Գյուղատնտեսության նկատմամբ 1934 թվականը  
կապիտալիստական ու գաղութային յերկրներում հան-  
գիսավագ հացատիկային ու տեխնիկական մշա-  
կութեների զգալի անբերի գության տարի, ինչպես և  
անասնաբուծության նոր անկման տարի: Բուրժուա-  
կան կառավարությունները, կալվածատիրական ու  
կուլակային տնտեսությունների արտադրանքի գինը  
բարձրացնելու նպատակով, հաճախ վարում են ցան-  
քերի տարածության ուղղակի կրծմատման քաղաքակա-  
նությունը և հողագործության մեքենայական տեխնի-  
կայից հրաժարվելու քաղաքականություն, սակայն  
գրանով նրանք միմիայն հետադիմության են դատա-  
պարում գյուղատնտեսությունը: Այդ կապակցու-  
թյամբ, ավելի յե վատացել գյուղացիական մասսա-  
ների գրությունը կապիտալիստական յերկրներում ու  
գաղութեներում: Այդպիսով՝ այն, ինչ վոր անում ելին  
կառավարող շրջանները կապիտալի յերկրներում ճշդ-  
նաժամը մեղմելու համար, կատարվում է ի հաշիվ  
աշխատավորների, հոգուտ տիրապետող, շահագոր-  
ծող դասակարգերի:

Դրանից հետո դժվար չե համեմատել համաշխարհային զարգացման յերկու գիծը :

Ժողովրդական տնտեսության տարեցտարի անշեղորեն առաջ ընթացող վերելքը—այս և ԽՍՀՄ-ի՝ սոցիալիզմ կառուցող յերկրի՝ զարգացման ուղին։ Արդյունաբերության և ժողովրդական վողջ տնտեսության ճգնաժամը, վորը շարունակվում է ավելի քան հինգ տարի և, չնայած վորոշ բարելավման, նոր ծաղկման հեռանկարներ չի հանդես բերում—այս և կազմական յերկրների, նեխող կապիտալիզմի զարգացման ուղին։

Մեր տերիսորիսան, վորտեղ տնտեսական ճգնաժամ չի յեղել և չկա, կապիտալիստական յերկրներից, վորտեղ ճգնաժամը հսկայական չարիք և պատճառել և դեռ պատճառում երաժանում են Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության սահմանները : (Ծափեր) : Այժմ բանվորները տեսնում են, վոր կապիտալիստական յերկրներում—կառավարման ինչպիսի սիստեմ ել ունենան նրանք՝ ակտած պառլամենտականից մինչեւ Փաշիստականը,—տնտեսական ճգնաժամերը, իրենց բոլոր կործանարար հետևանքներով, անխուսարիելի յեն։ Յեզ, ընդհակառակը, այժմ վոչ միայն մարքսիզմի տեսությամբ, այլև բոլորի աչքի տողեւ գտնվող կենդանի փաստերով, բանվորները համոզվում են, թե վո՞ր հասարակարգն է փրկում տընտեսական ճգնաժամերից և անսահման հնարայիշություններ և ստեղծում տնտեսական ու կուլտուրական վերելքի համար։

Ինչպես վոր 1917 թվականին Ռուսաստանը, իր Հոկտեմբերյան հեղափոխությամբ, ցույց տվեց համաշխարհային պատերազմը վերջացնելու ուղին, դուրս բերեց յերկրը պատերազմից և դրանով մահից փրկեց միլիոնավոր մարդկանց, այսպես ել այս վերջին հինգ տարում մեր յերկրը ցույց տվեց, թե վորտեղ և տընտեսական ճգնաժամից դուրս գալու ուղին և ինչպես կարող են հասնել դրան բանվորները : (Բուռն ծափեր) :

Խորհրդային Միությունը հակադրվում է բուրժուատական յերկրներին, մանավանդ վերջին տարիներու, յերեվան և բերում պրոլետարիատի դիկտատուրայի սկզբունքային իմաստը և համաշխարհային նշանակությունը ԽՍՀՄ-ում վորպես մի պետության, ուր կատարվում է տնտեսական ու կուլտուրական անշեղ վերելք, վորպես միակ պետության, վորին սարսափելի չեն ճգնաժամերը : (Բուռն ծափեր) :

## II. ԽՍՇՄ-Ի ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՊԻՏԱԼԻՍԱԿԱՆ ՅԵՐԿԻՐՆԵՐԻ ՀԵՏ ՅԵՎ ՄԵՐ ՊԱՅՔԱՐԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

I. ԽՍՇՄ-Ի ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆՆ

ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ

Այդպես ուրեմն, ներքին վոչ մի խոչընդոտ չկամեր յերկրի հետագա աճման համար: Սակայն այլ կերպ ե գործն արտաքին խոչընդոտների նկատմամբ: Կապիտալիստական յերկիրներում շարունակող ճգնաժամը սրեց արտաքին բարդությունների վտանգը, պատերազմի վտանգը:

Բուրժուական դասակարգերը, ճգնաժամից և ճրդ-ճգփող դեպքեսիայից դուրս գալու յելք վնասուելով, ուժեղացնում են իրենց ճնշումը բանվորների ու աշխատավորների վրա: Այդ ճնշման միջոցով, ի հաշիվ բանվոր դասակարգի, աշխատավորների ու դյուզացիների ճգնաժամից դուրս գալու ճգտումը վորոշում ե բորբոքական կառավարությունների ներքին քաղաքաբանությունը: Կերպարվում են պառլամենտար բանական դեմոկրատիայի մնացորդները՝ թե՛ բարուրժուական դեմոկրատիայի մնացորդները՝ թե՛ բացացարկած ձևով: Բուրժուազիայի մոտ, գնաճայտ, թե՛ քողարկված ձևով: Բուրժուազիայի մոտ գնալով ավելի մեծ ժողովրդականություն ե ստանում աշխատավորների նկատմամբ ուղղակի բռնություն և տեսոր դորժադրելու քաղաքականությունը:

Այդ բոլորը տանդամ և դեպի կապիտալիստական յերկիրների ներքին դրույթյան սրումը:

Սակայն այդ յերկիրների փոխազարձ հարաբերությունների մեջ ևս գնալով ավելի յէ զարգանում արտաքին շուկաների համար մղվող պայքարը, զարգանում և դեպի սրումը, դեպի հւեծեղացումը, ավելի ու ավելի հաճախ անցնելով առևտրական ու վայրուտային պատերազմի: Պացիֆիստական խոսակցություններն անցնում են անցյալի դիրկը: Պացիֆիստներն արդեն մողայից ընկել են: Բուրժուական յերկիրներում իշխանության ավելի ու ավելի յէն մոտենում ծայրահեղ խմբերիալիստական պարագլուխները, վորոնք գնալով ավելի բացահայտութեն են դատում նոր, հավիշտակողական պատերազմների մասին, ճգնաժամից պատերազմի միջոցով դուրս գալու մասին:

Զնայած նոր իմպերիալիստական պատերազմի ծագման ամբողջ վտանգին, վոր գոյություն ունի հենց կապիտալիստական յերկրների տիրապետող դասակարգերի համար, այնուամենայինիվ, մի քանի յերկրներ արդեն անցել են ակտիվ դործողությունների: Այդպես՝ ծավոնիան կանգ չառավ Չինաստահ դեմ ուղղված նոր պատերազմի առջե ու գրավեց Մանջուրիան, և ընդհանրապես չինական մեծ ժողովրդի յերկրում նա իրեն պահում և այնպես՝ կարծես իր տանը լինի: Վոչ միայն ճապոնիան, այլև Գերմանիան, դուրս յեկավ Աղգերի կիպայից, ըստ վորի այդ քաղաքականության իմաստը հասկանալի յէ բոլորին: Նրանք այդպես արեցին, վորպեսզի իրենց ձեռքերն արձակեն սպառազինումների և ուղմական պատրաստության համար: Դեռ վերջերս պայթեց ծովային սպառազինությունների վերաբերյալ վաշինգտոնի հայտնի համաձայնությունը, վորը կնքել եր 13 տարի առաջ Ամերիկայի, Անգլիայի, Ճապոնիայի և մյուս պետությունների միջև, վորովհետեւ այդ համաձայնությունը վոմանց սկսեց խոչընդոտ թվալ ծովային սպառազինությունների մրցակազդում և Խաղաղ Ովկիանոսի համար ուղղա-

կամ նոր գոտեմարտ նախապատրաստելու գործում։ Բուրժուական յերկրների դիվանագիտությունը և արտաքին քաղաքականությունն ավելի ու ավելի յեն սկսում ծառայել նրանց, ովքեր այժմ արդեն իրենց համար դաշնակիցներ են ընտրում՝ աշխարհն ի հաշվավելիք թույլ յերկրների նորից վերաբաժանելու համար իմպերիալիստական պետությունների միջև մզկելիք պատերազմում։

Մենք ստիպված ենք հաշվի առնել, վոր ԽՍՀՄ-ի համար պատերազմի անմիջական վտանգն ուժեղացել է։ Խորհրդային Միության դեմ ուղղված պատերազմի մասին վաղուց արդեն բացե ի բաց խոսում են ձաւունիայի մի քանի ազգեցիկ ըջանները։ Զի կարելի նաև մոռանալ այն, վոր Յելվոպայում այժմ կա կառավարող մի կուսակցություն, վորը բացահայտուն իր պատմական ինտերն եւ հայուարարել տերիտորիաների գրավումը Խորհրդային Միության մեջ։ Չտեսնել նոր պատերազմի մոռենալը, նշանակում ե աչք փակել գլխավոր վոր վտանգի հանդեպ։

Այդ բոլորին Խորհրդային Միությունը նախ և առաջ պատասխանեց ուժեղացնելով իր ակտիվությունը խաղաղության համար մզկող պայքարում։

Բոլորին հայտնի յե ԽՍՀՄ-ի լայն նախաձեռնությունը չհարձակելու պակտերի հարցում։ Խորհրդային Միությունը հաշվետու ըջանում պակտեր կնքեց առհմանամերձ մերձարակիցներն պետությունների և մի շարք յելվոպական յերկիրների հետ։ ԽՍՀՄ-ի մեղքով չե, վոր չհաջողվեց չհարձակելու պակտ կնքել ձապոնիայի հետ։

Մեծ նշանակություն ատացավ ԽՍՀ Միության առաջարկը նախահարձակ կողմը վորոշելու մասին։ Միջազգային կոնֆերանսներում և մի շարք միջազգային պարմանագրերում կարելի յե ցուցումներ գտնել, թե անհրաժեշտ են հատուկ միջոցներ, հարձակող կողմի դեմ, պատերազմն արձակող նախահարձակ պետության դեմ։ Սակայն, չնայած դրան, բուրժուական

յերկրների կառավարությունները ցանկություն չցուցաբերեցին պարզորոշ կերպով ասելու, թե ում պետք է համարել նախահարձակ կողմը, այսինքն պատերազմը սկսելու համար պատասխանատու յերկիր։ Այդ գործին վիճակից ձեռնամուխ վիճել խորհրդային գեղանագիտությանը, վորն առանձնապես շահագրգուէած է խաղաղության պահպանումով և ռազմական հարձակումների դեմ ուղղված միջոցառումներով։ Խորհրդային դիվանագիտությունը պատվով իրագործեց այդ խնդիրը ևս։ (Նախեր)։ Մենք համապատասխան առաջարկ մտցրինք միջազգային կոնֆերանսում քննելու, իսկ այդ գործն անհապաղ գործնականություն առաջ մզելու համար մենք մի շարք յերկիրների առաջարկեցինք կնքել համապատասխան պակտ, այսինքն՝ հարձակվող կողմը վորոշող պայմանագիր։ Ինչպես հայտնի յե, այդպիսի պակտ ստորագրեցին Յելվոպայի մեղ սահմանակից բոլոր պետությունները, ինչպես և Թյուրքիան, Պարսկաստանը և Աղոհանանը և, բացի դրանից, Չեխոսլովակիան ու Հարավ-Ալայիին։

Մեր կառավարությունը միշտ ել մեծ նշանակություն և տվել զինաթափման, կամ առնվազն սպառազինությունների առավելագույն կրծառման հարցի բացահայտ քննարկմանը։ Հենց այդ իմաստով և աշխատել խորհրդային դիվանագիտությունը զինաթափման միջազգային կոնֆերանսում։ Յես կարող եմ ասել, վոր զինաթափման միջազգային կոնֆերանսի բազմաթիվ նկատերն ապարդյուն անցան։ Սակայն վոչ վոք չի կարող ասել, թե Խորհրդային Միությունը չի արել այն ամենը, ինչ վոր կարող եր անել, ընդհանուր կամ առնվազն առավելագույն զինաթափման վրա պնդելու համար։ Մենք չե, վոր պետք է պաշտպանենք ժնելի զինաթափման կոնֆերանսը, բայց մենք չենք տարակուառում, վոր այդ կոնֆերանսում խորհրդային դիվանագիտության դործաղրած ջանքերը, վորոնք լայնորեն հայտնի դարձան շատ յերկրներում, պատրդյուն չեն անցնի։ Այդ քաղաքա-

կանության տրամաբանական չարունակությունն ե մեր այն առաջարկը, վոր զինաթափման կոնֆերանսը, վորից վորանք ուզում են վորքան կարելի յե չուսով ազատել իրենց ոճիքը, դառնա խաղաղության մշտական կոնֆերանս, մի որպան, վորը մշտապես հոգ տանի պատերազմը կանխելու մասին։ Այդ առաջարկը դեռ քննվելու յե միջազգային կոնֆերանսում մյուս յերկիրների կողմից և մենք պնդելու յենք նրա վրա։

Վերջին շրջանում մեր առջև նոր ձեռվ ծառացավ Ազգերի Լիգային մեր ցուցաբերած վերաբերմունքի հարցը։ Հայտնի յե, վոր Ազգերի Լիգան ժամանակին ստեղծել եյին այն պետությունները, վորոնք այն ժամանակ դեռ չեյին ցանկանում ճանաչել նոր բան-վորապյուղացիական պետության գոյության իրավունքը, բայց դրա փոխարեն մասնակցում եյին հակախորհրդային ռազմական ինտերվենցիային։ Ժամանակին ուժդին ձգտում եյին Ազգերի Լիգան դարձնել մի թնդանոթ, վորի բերանն ուղղված լիներ Խորհրդային Միության դեմ։ Դրա համար նա պետք ե ապահովությունը վորոշ համաձայնություն իմպերիալիստների միջև։ Սակայն այդ գավերը ձախողվեցին։ (Ծափեր)։

Շատ ջուր ե հօսել այդ ժամանակից ի վեր։ Վերջին ժամանակվա անցքերն ընդդեցին այն փոփոխությունը, վորը տեղի ունեցավ Ազգերի Լիգայի դրության մեջ։ Ազգերի Լիգայից սկսեցին դուրս դալ ամենաուղագատենչ, աղքանիկ տարրերը։ Նրանց համար տվյալ պայմաններում Ազգերի Լիգան նեղվածք և անհարմար հանդիսացավ։ Սակայն Ազգերի Լիգայի մասնակիցների մեծ մասն այժմ այս կամ այն նկատառումներով չի շահագրգույնած պատերազմի դորձողության մեջ։ Մենք պետք ե մեր բոլցելիքան յեղակացություններն անեյինք այդ գրությունից։ Ուստի մենք համակարանքով վերաբերվեցինք 30 պետությունների ԽՍՀՄ-ն Ազգերի Լիգայի մեջ մտնելու առաջարկին։ Քանի վոր խաղաղությունն ապահովելու հարցում Ազգերի Լիգան կարող ե այժմ վորոշ դրա-

կան դեր խաղալ, Խորհրդային Միությունը չեր կարող նպատակահարմար չամարել մեր գործակցումն Ազգերի Լիգայի հետ այդ գործում, թեսկետ մեզ հասուկ չե գերազահատել նման կազմակերպությունների դերը։ Ավելորդ ե ասել, վոր ԽՍՀՄ-ի Ազգերի Լիգայի մեջ հրավիրվելը 30 պետությունների կողմից, բնակչի չի նսեմացնում Խորհրդային Միության միջազգային հեղինակությունը, այլ հակառակն է վկայում։ Այդ փաստը մենք դրանցում ենք մեր ակտիվ մեջ։ (Ծափեր)։

Խորհրդային կառավարությունը վոչ միայն նախաձեռնություն ցուցաբերեց, այլև պաշտպանեց մյուս կառավարությունների այն քայլերը, վորոնց նպատակն եր պահպանել խաղաղությունը և միջազգային ապահովությունը։ Այդ կապակցությամբ, պետք ե մատնանշել, վոր մենք ակտիվ կերպով պաշտպանեցինք Ֆրանսիայի առաջարկը՝ այսպես կոչված փոխադարձ ողնության արևելյան պակտ կնքելու մասին։ Այդ պակտը, բացի ԽՍՀՄ-ից, պետք ե ընդդրկի առև այնպիսի յերկրներ, ինչպիսիք են՝ Ֆրանսիան, Գերմանիան, Զելյո-Սլովակիան, Լեհաստանը, Լիտվան, Եստոնիան և Լատվիան։ Այդ պայմանագիրն ստորագրողերը պետք ե ամեն տեսակ ողնություն ցույց տան միմյանց, ներառյալ նաև ռազմական ուժաներություն, այն գեազում, յեթե հարձակում կատարվի պակտն ստորագրած յերկրներից մեկի վրա։ Մի շարք ամիսների ընթացքում բանակցություններ են վարդում վերոհիշյալ յերկրների հետ այդ պակտը կնքելու համար։ Այժմ յես կանգ չեմ առնի այն պատրիակաների վրա, վորով Գերմանիան, իսկ նրա հետ միասին նաև Լեհաստանը, առայժմ հրաժարվում են իրենց համաձայնությունը տալ պակտն ստորագրելու համար։ Սակայն Յեկարությունը խաղաղության բոլոր կողմնակիցների համար հասկանալի յե Արմելյան պակտի նշանակությունը։ Ուստի, չնայած վերոհիշյալ յերկրների կողմից առայժմ գոյություն ունեցող փոշություններին ու առարկումներին,

Խորհրդային կառավարությունն անփափոխ է համարում իր վերաբերմունքն այդ գործին։ Մենք այդ գործի հաջողությունը դիտելու յենք վորագես մի քայլ դեպի առաջ՝ Յեղոպայում խաղաղությունն ապահովելու գործում։

Այդ բոլորը ցույց ե տալիս, թե վորն է Խորհրդային Միության արտաքին քաղաքականության հիմքը։ Մեր արտաքին քաղաքականության հիմքն է խաղաղության պահպանումը և խաղաղ հարաբերությունների զարգացումը բոլոր յերկրների հետ։ (Ծափեր)։ ԽՍՀՄ-ի դերը վորագես ընդհանուր խաղաղության ամուր գործի, այժմ քայնորեն ճանաչված է։ Կանոն և դարձել, վոր մյուս յերկրները դիմեն Խորհրդային Միության այն դեսպերում, յերբ գործը վերաբերում է խաղաղության ապահովմանը։ Յեվ դա հասկանալի յե։

Վոչ մի յերկիր, ներառյալ նաև վոչ մի ամենափոքր պետություն ԽՍՀՄ-ի առհմանագլխին, հիմք չունի անհամատաւություն գեալու Խորհրդային Միության նկատմամբ, վորը բնավ չի կարելի ասել մյուս մի քանի խոչոր պետությունների մասին։ Բանվորագյուղացիական պետության հեղինակությունն ու գորությունը միջադպային հարաբերություններում այժմ ծառայում է մի գործի՝ ընդհանուր խաղաղության գործին։ Խորհրդային Միությունը դարձել է բոլոր յերկրների աշխատավորության կենսական շահերի արտահայտիչը միջազգային հարաբերությունների ասպարիզում։ Ինչ ել խոսեն մեր դասակարգային թշնամիները, ԽՍՀՄ-ի պրոլետարիատի դիկտատուրայի քաղաքական իմաստը տվյալ պայմաններում, յերբ պատերազմի վտանգը գնալով ավելի այժմեական ե գտանում, այն ե, վոր ամբողջ աշխարհում չկա խաղաղության ավելի վատահալի մի պատվար, քան մեր բանվորագյուղական իշխանությունը։ (Բուռն ու յերկարած ծափեր)։

ԽՍՀՄ-ի ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՍԵՐԻ ԶԵՏ ՅԵՎ ՄԵՐ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մյուս յերկրների հետ մեր ունեցած հարաբերությունները կախված են վոչ միայն մեզանից, այլև այսությունների արտաքին քաղաքականությունից։ Իսկ ձեզ բոլորիդ հայտնի յե, թե վորքան շատ հակասություններ կան բուրժուական պետությունների քաղաքականության մեջ։

Յեթե մեր արտաքին քաղաքականությունը պարզուց ու կայտն է, ապա նույնը չի կարելի ասել այն յերկրների մասին, վորաել՝ այս կամ այն ազգեցությունների տակ, տեղի յեն ունենում կառավարությունների հաճախակի փոփոխումներ, վորտեղ մի բուրժուական կուսակցություն փոփարինում և մյուսին իշխանության զեկի մոտ։ Որինակ՝ բոլորին հայտնի յեն այն եյական փոփախումներն ու զիգզագները, փորոնք տեղի ունեցան հաշվետու շրջանում վորուց յերկրների քաղաքականության մեջ և վորոնք անդրադան մեր արտաքին փոխարաբերությունների վրա։

Միջազգային բարդ պայմաններում տեղի յե ունենում յերկու ներհակ հասարակական սիստեմների մրցությունը և քրա հետ միասին՝ գործակցությունը։ Կարելի յե ասել, վոր այդ գրությունը հակասական է, սակայն դա համապատասխանում է գործերի փաստական ընթացքին։ Տեղի յե ունենում ԽՍՀՄ-ի մըրցությունը, կամ յեթե կուզեք՝ պայքարը, և դրա հետ միասին՝ նորանոր ձեերով ծավալվում է նրա գործակցությունը կապիտալիստական այս կամ այն յերկրի հետ, ինչպես տնտեսական հարաբերությունների ասպարիզում, այնպես ել խաղաղությունը պահպանելու գործում։ ԽՍՀՄ-ն առավելագույն չափով ձգտում է գարգացնել իր առևտրական հարաբերությունները մյուս յերկրների հետ։ Սակայն հաշվետու շրջանում դլխավոր նշանակություն ստացավ ԽՍՀՄ-ի

գործակցությունը մյուս յերկրների հետ խաղաղությունն ապահովելու գործում:

Ի՞նչպես առաջացան այդ հարաբերությունները հաշվետու ըրջանում:

ԽՍՀՄ-ի հարաբերությունները կապիտալիստական յերկրների հետ, հաշվետու ըրջանում, վերջ է վերջո, բնորոշվում ելին յերկու հիմնական մոմենտներով՝ առաջին, կապիտալիստական յերկրների ներքին դրության սրումով և նրանց փոխադարձ պայքարի ուժեղացումով՝ տնտեսական շարունակվող ճգնաժամի կապակցությամբ և, յերկրորդ, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Խորհրդյան դորության աճմամբ:

Այդ կապակցությամբ, առանձնապես կարևոր են մատնանշել հետեւյալ փաստերը: Հաշվետու ըրջանում սրվեց հաղթանակ տարած յերկրների ու պարագայություն կրած յերկրների փոխադարձ պայքարը և այդ կապակցությամբ ուժեղացավ, մանավանդ Յեվրոպայի վորոշ մասում, գաղտնի այն աշխատանքը, վորի նպատակն են վերափոխվորել ուժերը՝ հնարավոր պատերազմի համար և այդ նպատակով դաշնակիցներ գտնել աշխարհիս վորեւ մասում: Միևնույն ժամանակ ԽՍՀՄ-ի և կապիտալիստական յերկրների հարաբերությունների զարգացումն արտացոլեց ԽՍՀՄ-ի, վորպես միջազգային գործոնի, մանավանդ վորպես խաղաղության ու ապահովության գործոնի, դերի զգալի մեծացումը:

Անցնելով անցյալ ըրջանի կոնկրետ փաստերին, պետք է նախ և առաջ ասել, վոր վերականգնվեցին ԽՍՀՄ-ի գելվանագիտական հարաբերությունները մի շարք պետությունների հետ: Այսուղ պետք են թվել այնպիսի յերկրներ, ինչպիսիք են Սմերիկայի Միացյալ Նահանգները, Չինաստանը, Իսլանդիան, Հունակարիան, Ռումինիան, Չեխո-Սլովակիան, Բուլղարիան:

Մեծ նշանակություն ունի Սմերիկայի հետ նորմալ հարաբերություններ հաստատելու փաստը: Միա-

յալ Նահանգները 15 տարի կանգնած եյին Խորհրդային Միությունը ժխտելու, Խորհրդային իշխանությունը չձանաչելու սկզբանքային դիրքերում, ունենալով իրենց գրավանում ինչ վոր ներկայացուցիչ՝ կերենակուն: Ամենահարուստ կապիտալիստական յերկիրը հույս եր դրել իր ուժերի վրա և վատ կարծիք ուներ մեր իշխանության կայունության մասին: Այդ հարցում նա հանդես եր գալիս կապիտալիստական աշխարհը նոր խորհուրդային աշխարհից անհաշտորեն սկզբանքորեն պաշտպանելու դրոշի տակ: Բայց յերեւակութիւն, նա մինչև վերջին ժամանակներս հույս ուներ, վոր ում ել վոր չհաջողվի, այնուամենայնիվ հարուստ Սմերիկային կհաջողվի մնալ այդ դիրքում: Սակայն գործը բոլորովին տարբեր ընթացք ստացավ, քան յենթագրում ելին Ամերիկայի նախկին կառավարությունները: Յեզ նախադահ Ռուսվելտը հանդես յեկավիր հայտնի ուղերձով՝ ԽՍՀՄ-ի հետ նորմալ հարաբերություններ հաստատելու մասին:

Դրանով իսկ Ամերիկան հրաժարվեց իր սկզբունքային գերքից, վորը շատ դրական հանգամանք պետք է համարենք մենք, մանավանդ ընդհանուր խաղաղության շահերի տեսակետից: Մենք կարիք չունեցանք փոխել մեր դիրքերը և վորեւ զոհարերություն անել այդ հարաբերությունները վերականգնելիս և այդ ևս չի կարելի շատ դրական փաստ չամփարել: (Ծավիր):

Վերականգնվեցին նաև մեր նորմալ հարաբերությունները Զինաստանի հետ, վորոնք խզվել ելին Զինաստանի կողմից 1928 թվականին նրա հակախորհը զրդային տարբերի ճնշումով: Այդ ժամանակից վեր, Զինաստանի կառավարությունը ըստ յերեւակութիւն համոզվեց, վոր այդ խորմը չի կարող ծառայել հոգուտ չինական հանրապետության և միայն վատացնում են նրա միջազգային գրությունը: Գուցե վորեւ մեկին հարկավոր եր այդ գործնական դատը, բայց այդ արգեն նրանց գործն ե: Մեզ համար առանց այն ել պարզ ե, վոր ԽՍՀՄ-ի և Զինաստանի կանոնավոր փոխհարաբերությունները ծառայում են յեր-

կու յերկրների և ընդհանուր խաղաղության շահերին։  
Ուստի մենք գոհունակությամբ ընդունեցինք չինա-  
կան կառավարության առաջարկը՝ վերականգնել հա-  
րաբերությունները։ մի բան, վոր պետք ե ծառայի  
մեր յերկրի և չինական մեծ ժողովրդի բարեկամա-  
կան հարաբերությունների ամրացմանը։

Ինձ մնում ե յերկու խոսք ասել Սինցյանի խոր-  
հրաժանացմանը վերաբերյալ զրապարտիչ լուրերի մա-  
սին։ Աչքի յե ընկնում այն համամանքը, վոր ԽՍ-  
ՀՄ-ի դեմ ուղղված այդ զրապարտությունն առանձնա-  
պես աշխատում են տարածել ձապոնիայում, վորի քա-  
ղաքականությունը Չինաստանի նկատմամբ հայտնի  
յե բոլորին և վորը վոչ մի կերպ չի կարելի սքողել  
հերուրանքներ տարածելով։ Անհրաժեշտ եմ համպ-  
րում շեշտել Չինաստանի նկատմամբ գոյություն ու-  
նեցող իսկական խորհրդային քաղաքականություն։  
Խորհրդային Միությունն իր քաղաքականության հետ  
անհամատեղելի յե համարում ուրիշի տերիսորիա-  
ների գրավումը և անպայման կողմնակից ե Չինաս-  
տանի անկախությանն ու անձեռնմխելիք գերիշանու-  
թյանը նրա բոլոր մասերի վրա, ներառյալ ի հարկե-  
նաւ Սինցյանի վրա։

Ավելորդ ե ասել, վոր Ռումինիայի, Չեխո-Ալո-  
վակիայի և Բուլղարիայի հետ նորմալ հարաբերու-  
թյուններ հաստատելը նույնպես ամբողջովին համա-  
պատասխանում ե գործի շահերին և մանավանդ Յել-  
լուպայի խաղաղության շահերին։

Կարող են այսուամենայնիվ ասել, թե դեռ մնում  
են մի քանի յերկրներ, վորոնք նորմալ հարաբերու-  
թյուններ չեն հաստատել ԽՍՀՄ-ի հետ։ Արդարե,  
այդպիսի յերկիրներ կան և նույնիսկ Յելլուպայում  
կամ ավելի ճիշտ՝ Յելլուպայի մի քանի անկյուններում։  
Հարկավ, սիսալ կլիներ լուռթյամբ անցնել այդ յեր-  
կիրների վրայով, վորքան ել փոքր լինի նրանց տեսա-  
կարար կշիռ միջազգային գործերում։

Այդ յերկիրներից յերեքը՝ Հուանդիան, Փորթու-  
գալիան և Չվիցերիան քվեարկեցին ԽՍՀՄ-ի Ազգերի

Լիովայի մեջ մտնելու դեմ, ընդ նմին այնպէս ձևացնե-  
լով, թե նրանք այդ քայլին արել են կապիտալիստական  
կարգերը խորհրդային վատանգից սկզբունքուն պաշտ-  
պանելու դրդապատճաներով։ Այդպիսով, բոլոր յեր-  
կիրները, բացի այնպիսիներից, ինչպիսիք են Զվի-  
ցերիան, Հուանդիան և Փորթուգալիան, հրաժարվե-  
ցին ԽՍՀՄ-ի նկատմամբ սկզբունքային անհաշու-  
թյուն ցուցաբերելուց, իսկ այդ յերկիրներն ուզում  
են մինչև վերջը պահպանել կապիտալիզմի հեղինա-  
կությունն ։ Արդյոք շա՞տ բան կշահի կապիտալիզմը  
դրանից, հանձն չեմ առնում դատելու։ Բայց յեթե  
նրանք իրենց կամ ուրիշի կամ քով այդպես են ուզում,  
առա թող զբաղվեն այդ գործով։ (Ծափեր)։

Վերջինիքը Յելլուպայի քարտեզի վրա կարելի  
յե նկատել միայն փոքր քծեր, վորոնցով նշված են  
Խորհրդային Միության հետ նորմալ հարաբերու-  
թյուններ չունեցող յերկիրները։ Վերցրեք ամբողջ աշ-  
խարհի քարտեզը և այն ժամանակ կտեսնեք, վոր մի-  
ջազգային հարաբերություններում վորեե ազդեցու-  
թյուն ունեցող բոլոր պետությունների և Խորհրդային  
Միության միջև նորմալ հարաբերություններ են հաս-  
տատված։ Հարկավ, տվյալ գեպքում չպետք ե խո-  
սնենք գաղութային կամ կիսազգաղութային յերկիրների  
մասին, քանի վոր նրանց չի վերապահված այդպիսի  
հարցերն ինքնուրույն կերպով լուծել, այլ համապա-  
տասխան վորոշումներ են ընդունվում ձեզ հայտնի ու-  
րիշ կարգով։

Ինչպիս զնահատել այդ բոլորից հետո անցյալ  
շրջանի մեր արտաքին քաղաքականության հիմնական  
արդյունքները։ Մեր ասածներից հետևում ե, վոր  
մյուս յերկիրների և նորիդային Միության միջև  
նորմալ հարաբերություններ հաստատելու հարցը հիմ-  
նականում լուծված է։ (Բուռն ծափեր)։

Սրանք են հաշվեառ շրջանում մեր վարած ար-  
տաքին քաղաքականության կարևորագույն հանրագու-  
մարները։

Հպմառուսակի կիսում առանձին յերկիրների ու

նախ և առաջ այն յերկիրների մասին, վորոնց հետ մեր հարաբերությունները զարգացել են նորմալ կերպով։ Այստեղ առաջին հերթին պետք է խոսել մեր և Մերձալթյան այնպիսի յերկիրների փոխհարաբերությունների մասին, ինչպիսիք են՝ Լիտվան, Լատվիան, Եստոնիան, Ֆինլանդիան։ Խորհրդային իշխանությունն այդ պետությունների նկատմամբ իր վարած քաղաքականության բարեկամական բնույթին ընդգծել և հատուկ հայտարարությամբ՝ այդ յերկիրների անձնության միելիությունը և տնտեսական ու քաղաքական լիակատար անկախությունը ճանաչելու մասին։ Դժբախտաբար, չի կարելի զանց առնել այն փաստը, վոր Լեհաստանն ու Գերմանիան մերժեցին իրենց մասնակցությունն այդ գործին։

Մեր հարաբերությունները միանգամայն նորմալ կերպով զարգացել են այնպիսի յերկիրների հետ, ինչպիսիք են Շվեդիան, Նորվեգիան, Դանիան, Պարսկաստանը, Ավղանստանը, նույնպես Իտալիայի հետ, մի բան, վոր ակնառու կերպով հաստատում ե, թե հնարավոր ե գործակցության զարգացումը կատարելավես ներհակ հասարակակարգ ունեցող յերկիրների միջև։

Բարեկամական հարաբերությունների լավագույն զարգացման որինակ են հանդիսանում մեր հարաբերությունները Թյուրքիայի հետ։ Վերջին տարիները հանդիսացան վոչ միայն խորհրդային - թրքական տընտեսական ու կուլտուրական կապերի զարգացման ժամանակաշրջան, այլև խորհրդային-թրքական բարեկամության քաղաքական փայլուն ցուցադրումը։ (Բուռն ծափեր։ Համագումարն ուվացիա յե սարքում ի պատիվ թբքական դեսպանի)։ Դեռ վոչ հեռու անցյալում, խորհրդային հեղափոխությունից առաջ, Թյուրքիան՝ իր կոնստանտինոպոլսով ու նեղուցներով, իմպերիալիստական դիշատիչ ցանկությունների առարկա յեր հանդիսանում ամեն զույնի ոռուսական ուեկիցիոններների և լիբերալների համար, ներկայացնելով վորպես վաճառականների, կալվածատերերի

ու գործարանատերերի նուսաստանը։ Այդ եպոփաայի և Խորհրդային իշխանության միջև անդունդ ե ընկած։ Խորհրդային իշխանությունը, վորպես բանվորների ու գյուղացիների իշխանություն, յելակետ և ունեցել և ունի մի այլ քաղաքականություն, վորը բացառում և հափշտակողական պլանների քաղաքականությունը և համակածիք ե խորհրդական թյուրքիայի վերածնման գործի հանդեպ։ Այդ ամուռ հիմքի վրա ամրապնդվում են խորհրդային - թրքական բարեկամության հարաբերությունները։ (Ծափեր)։

Անգլիայի հետ մեր հարաբերություններն ընդհանրապես նորմալ են զարգացել, յեթե չհաշվենք Անգլիայի նախկին գեսապան սպառոն Ովիոյի հետ տեղի ունեցած հայտնի միջադեպը։ Վերջինս փորձեց միջամտել մեր ներքին գործերին, հանդես գալով անթույլատրելի պահանջներով «Մետրո - Վիկկերս» Փիրմայի կողմից մեզ մոտ աշխատող ու մերկացված վնասայի ինժեներների դատավարության ժամանակ։ Անրար ինժեներների համապատասխան հակահարված արվեց մեր կողմից։ (Ծափեր)։ Յեթե վորեւ մեր կին հարկավոր եր մի ավելորդ անգամ համոզել, վոր մեր արտաքին ու ներքին քաղաքականությունն ամուռ ե, ապա նա հարմաք առիթ ատացավ դրա համար։ (Ծափեր)։ Ինչեւս հայտնի յե, այդ միջադեպն զգալի բարեկամություն առաջացրեց անդունք - Խորհրդային համարդություններում, բայց չորհիվ յերկու կողմից բարեկամություններու կորու ժամանակից հետո ձեռք առնված միջոյների, վորու ժամանակից վերացեց։ Պարոն Ովիոյին փոխարինեց նոր գեսապան։ Անգլիայի հետ մեր հարաբերությունները նորմալ հանի մեջ մտան, ընդ վորում աթյունները կնքած առետրական համաձայնություննը նախառակուր հանդիսաւական համարության հարաբերությունների զարգացման համար։

Թբքանիայի հետ մեր հարաբերությունների մեջ պետք ե նշել զգալի բարեկամում անցյալ շրջանում։ Անգլիային ամբողջ իրադրությունը և մանավանդ

Յելքոպայում տեղի ունեցած վոփոխությունները վերին աստիճանի հրատապ դարձելն խաղաղությունն ու անվտանգությունն ապահովելու պրոբեմը, վորի նկատմամբ ինչպես Խորհրդային Միությունը, այնպես էլ Ֆրանսիան հատուկ շահագրգոռություն ցուցաբերեցին: Պետք է ընդգծել, վոր ամենամու ապագայի համար այդ պրոբեմի նշանակությունն ամեններն չենը վազում, ուստի ուրվարժելող մերձեցումը զարգանայունպատճենը հող ունի: Գործն ամենից ավելի կախված է նրանից, թե շահագրգոռված կողմերը վորքան հետևողական են ուրվարժելու դիմում:

Ինչ վերաբերում ե Լեհաստանին, ապա մենք բավականաչափ և ակնհայտ ձեռվ ձգտում ցուցաբերեցիք խորհրդային-լեհական հարաբերություններն ել ավելի զարգացելու ուղղությամբ: Սակայն մենք չենք կարող ասել, թե բավարարված ենք այդ տեսակետից արդեն ձեռք բերված արդյունքներով: Բայց մեր մասին կարող ենք հաստատավես ասել, վոր մտադիր ենք չարունակել խորհրդային - լեհական բարի հարեվանական հարաբերությունները զարգացնելու կուրսը:

Չենք կարող մեր աչքը փակել այն փոփոխությունների հանդեպ, վորոնք տեղի ունեցան խորհրդային-գերմանական հարաբերությունների ասպարիզում՝ նացիոնալ-սոցիալիզմի իշխանության գլուխն անցնելուց հետո:

Մեր մասին մենք կարող ենք ասել, վոր չենք ունեցել և չունենք մի այլ ցանկություն, քան այսուհետեւ ևս լավ հարաբերություններ ունենալ Գերմանիայի հետ: Բոլորին հայտնի յէ, վոր Խորհրդային Միությունը համակված ե մի խորհին ձգտումով զարգացնել իր հարաբերությունները բոլոր պետությունների հետ, առանց բացառելու նաև ֆաշիստական ուժի ունեցող պետությունները: Սակայն խորհրդային-գերմանական հարաբերությունների հանապարհին լուրջ դժվարություններ ծագեցին վերջին շրջանում:

Հարկավ, գերմանական ժողովրդի, վորպես ամ-

բողջ աշխարհի «տիրոջ» մասին յեղած գերնացիոնալիստական ցեղային «տեսությունները» չեն, վոր խոչընդուռ են հանդիսանում խորհրդային - գերմանական հարաբերությունների զարգացմանը: Մենք այնքան ել բարձր կարծիք չունենալով այդ «տեսությունների» մասին (ծիծառ, ծափեր), չենք թագծնում մեր խորը հարգանքը զեկի գերմանական ժողովուրդը, վորպես ներկա եպօպայի մեծ ժողովուրդներից մեկը: (Ծափեր): Մենք, ինտերնացիոնալիստաներս, գործով արդացուցեցինք Խորհրդային հշանառության բարձր հարգանքը թե՛ մեծ, և թե՛ փոքր ժողովուրդների հանգեղ, թե՛ Խորհրդային Միության ժողովուրդների և թե՛ մյուս յերկիրների ժողովուրդների հանգեղ: Այդ ե Խորհրդային իշխանության սկզբունքների մեծ ուժի նշաններից մեկը: Ընդհակառակը՝ ցեղային ուեակցիոն «տեսությունների» մեջ մենք դատապարտվածության նշան ենք տեսնում... Յել այսպես, բանն այդ «տեսությունները» չեն, այլ այն, վորը հենց գտնվում ե ներկայիս Գերմանիայի արտաքին քաղաքականության հիմքում: Մենք ստիպված ենք այդ հարցը զնել ուղղակի կերպով, քանի վորպարզությունը մեր փոխհարաբերությունների մեջ կարող ե ոգուտ բերել միայն: Մի հանդամանք զրավում է մեր հատուկ ուշադրությունը: Յես նկատի՝ ունեմ պարոն Հիտլերի հայտարարությունը Ռուսաստանի մասին՝ նրա «Խմ պայքարը» դրքում, վորը ներկայումս հատկապես լայն կերպով տարածվում է Գերմանիայում: Այդ զրքում մենք կարգում ենք հետեւալում:

«Մենք, նացիոնալ-սոցիալիստներս, գիտակցորեն զիծ ենք քաշում նախապատերազմյան ժամանակվագերմանի արտաքին քաղաքականության տակ: Մենք սկսում ենք այնտեղից, վորտեղ Գերմանիան ավարտեց 600 տարի առաջ: Մենք վերջ ենք դնում գերմանացիների հավախցիս շարժմանը դեպի Յեկարպայի հարակն ու հյուսիսը և մեր հայացքն ուղղում ենք արեւելքում գտնվող հողերի վրա: Մենք դադարեցնում ենք, վերջապես, նախապատերազմյան ժամանակվա-

գաղութային ու առևտրական քաղաքականությունն ու անցնում ապագայի քաղաքականությանը՝ տերիտորիալ նվաճման քաղաքականությանը:

Սակայն յերբ մենք ներկայաւմս խոսում ենք Յեղուապայում նոր հոդեր ձեռք բերելու մասին, ապա մենք կարող ենք առաջին հերթին նկատի ունենալ միայն Ռուսաստանը և երա իշխանության տակ գտնվող ծայրամասային պետությունները:

Ճակատագիրն ինքն է կարծես մատնանշում այդ ուղին» (ընդգծումը գրքի հեղինակինն ե. Վ. Մ.):

Պետք է արդյոք մենք անցնենք ներկայիս գերմանական կառավարության պետի այդորինակ հայտարարությունների կողքով: Ակնհայտ է, վոր վոչ:

Պետք է արդյոք Խորհրդային Միության քաղաքացիները դիտենան ԽՍՀՄ-ի վերաբերմամբ արված այդ հայտարարությունները: Մենք դանում ենք, վոր պետք է գիտենան: (Ծափահարություններ):

Յեվ մենք դրանից հետո հարց ենք տալիս պ. Հիտլերին-Ռուսաստանի մասին արած հիշյալ հայտարարությունը, վորը ներկայումս կրկնվում է այդ գրքի բոլոր նորանոր հրատարակություններում, այդ հայտարարությունը մնո՞ւմ է արդյոք ուժի մեջ: Մնո՞ւմ է արդյոք ուժի մեջ պ. Հիտլերի հայտարարությունը Յեվրոպայի արևելքում «տերիտորիալ նվաճումների քաղաքականության» անցնելու անհրաժեշտության մասին և այն մասին, թե՝ «յերբ մենք (նացիոնալիստներ) խոսում ենք նոր հոդերի մասին Յեվրոպայում, ապա կարող ենք առաջին հերթին նկատի ունենալ միայն Ռուսաստանը և նրա իշխանության տակ գտնվող ծայրամասային պետությունները»: Բայ յերեսույթին, այդ հայտարարությունն ուժի մեջ մնում է, քանի վոր այդպիսի յենթարկության ժամանակ և միայն, վոր շատ բան հասկանալի յէ դառնում Խորհրդային Միության նկատմամբ, ինչպես և Արևելյան պակտի նախագծի նկատմամբ գերմանական կառավարության ունեցած ներկա վերաբերմունքի մեջ:

Հենց այդ պատճառով ել մենք հնարավոր չենք

գտնում անցնել պ. Հիտլերի այդ հայտարարությունների կողքով: Թող Խորհրդային Միության աշխատավորները դիտենան, թե բանն ինչումն է: Մենք, բացի այդ հարցում պարզություն մտցնելուց, ուրիշ վոչնչի չենք ձգտում: Յեվ քանի վոր պ. Հիտլերի հիշյալ հայտարարություններն ըստ յերկույթին ուժի մեջ են մընում, ապա մենք հաշվի կառնենք այդ փաստը և դրանից յերպակացություններ կառնենք մեզ համար: (Բուռն ու յերկարատև ծափահարություններ):

Վերջապես՝ ձապնիայի հետ ունեցած մեր հարաբերությունների մասին:

Այս ամբողջ ժամանակաշրջանում մենք այդ հարաբերությունների մեջ համբերատարություն ու հարկ յեղած զիջողություն ենք ցուցաբերել, ձգտելով վերացնել խորհրդային - ճապոնական հարաբերությունները սրոց բոլոր տեսակի շարժառիթները: Այդպես վերաբերելցինք մենք տնտեսական բնագավառում յեղած վիճելի հարցերի լուծմանը, յերբ խոսքը վերաբերում եր խորհրդային ջրերում ճապոնական քաղաքացիների ձգնորսության շրջաններին ու կարգին, յերբ խոսքը վերաբերում եր Սախալինում գտնվող ճապոնական կոնցեսիաներին և այն: Բոլորին հայտնի յէ, վոր զեկավարվելով իր խաղաղասիրական քաղաքականությամբ, Խորհրդային կառավարությունն առաջարկ արեց Մանջուրիայում գտնվող Չին - Արեվելյան յերկաթուղին ճապոնիային ու Մանչժոու-Գոյին վաճառելու մասին, ցանկանալով դրանով վերացնել ամեն տեսակի կոնֆլիկտների շարժառիթները: Խորհրդային կառավարությունն այդ հարցում արժանագայել ու միաժամանակ զիջող դիրք դրանեց և կարողացավ գործը տանել այնպես, վոր մյուս կողմը հրաժարվեց իր մկրնումների առաջարկներից: Ներկայումս Չին - Արեվելյան յերկաթուղու վաճառման վերաբերյալ բանակցություններն ըստ յերեսութին ավարտվելու վրա յեն: Մենք հույս ունենք, վոր մեր ջանքերը՝ խորհրդային - ճապոնական հարաբերությունները բարելավելու և Հեռավոր Ա-

ըևելքում խաղաղությունն ապահովելու ուղղությամբ՝ կտան իրենց դրական արգյունքները:

Սակայն վոչ մի հիմք չունենք մեզ հանդստացնելու: Ազրեսիվ, ռազմատենչ տարրերը ձապոնիայում վայր չեն դնում դենքը: Խորհրդային Միության դեմ պատերազմելու մասին ձապոնիայում վաղուց արդեն բացահայտորեն խոսում են և մինչև այժմ ել այդ հակախորհրդային յերլոյթների թուլանալու նշաններ չեն յերեսում: Կառավարական որդաններում ազգեցություն ունեցող ճապոնական վորոշչաններում վաղուց ու բացահայտորեն ծամեմում են վոչ միայն Զին - Արեւելյան յերկաթուղին հափչուկելու, այլև մեր Հեռավոր Արևելքը և առաջին հերթին Մերձովյանը հափչուկելու պլանները: Այս փաստերը մենք հաշվի չառնել չենք կարող, մանավանդ յերբ մենք ենք հիշում, վոր ճապոնացիները, վորպես ինտերվենտներ, ամենալեռջինը հեռացան մեր տերիտորիայից: 1922 թվականի հոկտեմբերի վերջերին միայն ճապոնացիները թողին վարդիվաստոկը և դա վերջին ինտերվենտների հեռանալն եր Խորհրդային Միությունից:

Այս ամենը հենց վորոշում ե մեր քաղաքականությունը տվյալ հարցում և պաշտպանության համար անապայման անհրաժեշտ այն միջոցները, վոր մենք կերառեցինք Հեռավոր Արևելքում: Ենք կարող ենք հավաստիացնել խաղաղության բոլոր կողմնակիցներին ձապոնիայում, վոր այդ միջոցները համապատասխանում են հենց ընդհանուր խաղաղության դործի շահերին:

Այժմ մի քանի խոսք կատամ մեր արտաքին առևտրի բնագավառում ունեցած հանրագումարի մասին: Այստեղ մենք լուրջ նվաճումներ ունենք, վորսնք զգալիորեն ամբացրին մեր դիրքերը մյուս յերկրների հետ ունեցած մեր առևտրական հարաբերությունների առպարիզում:

Մեր արտաքին առևտրուն անցամ իր գժվարությունների վորոշ շրջանը: Դուք դիտեք, վոր մենք դեռ

մինչև վերջերս տեխնիկական տեսակետից չափազանց չետամնաց յերկիր է յինք: Այդ կատակցությամբ, առաջին հնգամյակի սկզբին, մենք ստիպված ենքնք մեծ քանակությամբ մեքենաներ ներմուծել արտասահմանից, վորպեսզի արագացնենք մեր յերկրի ինդուստրացման և գյուղատնտեսության տեխնիկական վերակառուցման գործը: Սակայն հիմք դնելով, մենք կարողացանք վերջին տարիների ընթացքում ծավալել մեքենաների արտադրությունը մեզ մոտ, մեր գործարաններում: Յեկային թույլ տվյալ մեզ ուժեղ չափով կրծատել մեքենաների ներմուծումն արտասահմանից: Այդ փոխեց նաև արտաքին առևտրի մեր բարձրաց: Դրա արդյունքն այն յեղավ, վոր արտաքին առևտրի ասպարիզում վերջին յերկու տարիներն արդեն յեկամուստների զգալի գերակշռում տվին մեզ՝ ծափերի նկատմամբ, վորը մենք առաջ չունեյինք: Արտասահմանում անցյալից կուտակված խոշոր պարտքերը մեզ հաջողվեց վերջին տարիների ընթացքում կրծատել չորս անգամ և ներկայումս մեր պարտքերի մնացորդները չեն կարելի խոչընդունակ համարել: Դրա հետ միասին, վերջին չորս տարվա ընթացքում, վոսկու հանութը՝ Տորգունից ստացվածի հետ միասին, աճել ե վեց անգամ: Այս ամենն արմատապես փոխեց մեր վայրուտային դրությունը և առհասարակ մեր գրությունն արտաքին չուկաներում: Մանավանդ, վոր Խորհրդային Միություններին ու վճարումները մեջտ կատարում ե ճիշտ ժամկետին: Արտասահմանում բոլորին լավ հայանի յե, վոր յերբ Խորհրդային Միությունն առևտրական պայմանագրեր ե կնքում, ապա նա այդ պայմանագրերից զգիլող վճարումներն այնպես չեն կատարում, ինչպես ընդունված ե ներկայումս բուրժուական շատ յերկրներում: Նա վճարում ե վոչ թե «սիմվոլիկ» կերպով, այլ ինչպես հարկն ե, վոչ թե խոսուումներով, այլ վայլուտայով: (Ծափահարություններ): Այս փաստը նույնպես խոչընդունակություն ունի արտաքին առևտրի ասպարիզում մեր գերքերը լավագույն կերպով

ապահովելու համար։ Այս բոլորից հետեւամ է, վոր այժմ, ավելի քան յերբեք, մենք հարավորություն ունենք նորմալ պարմաններ, ապահովելու մեր արտաքին առևտրի համար։

Սակայն զարգացնելով քաղաքական և առևտրական հարաբերությունները մյուս պետությունների հետ, Խորհրդային Միությունը լավ է հասկանում իր սահմանների հուսալի պաշտպանության նշանակությունը։ Ո՞վ կարող է բացասել այն փաստը, վոր հսկայական Խորհրդային Միությունը վոչ փոքր և վոչ ել մեծ վորսե պետությանը համարակալումներով չի սպառնացել և չի սպառնում։ Սակայն մյուս կողմից՝ ո՞վ կարող է բացասել, վոր Խորհրդային Միության ժողովուրդները, վորոնք զբաղված են խաղաղ աշխատանքով և տոգորված են խաղաղ ձգտումներով, արժանի քով և տոգորված են խաղաղ ձգտումներով։ (Ծափահարություններ)։

Վերջին տարիների ընթացքում անհրաժեշտ սպառազինում ունեցող քիչ թվով ամրացված շրջաններ չենք կառուցել մենք մեր արևմտյան ու արևելյան սահմաններում։ Սակայն այդ սպառազինումները չենք տերիտորիան։ Նրանք կոչված են հարձակվող ուժերը հետ մզելու։ Մեր ծովային նավատորմն աճում է, սակայն այնպիսի տիպի նավերով և առաջին հերթին սուլանավերով, վորոնց պաշտպանողական գերը հասկանալի յէ։ Աճում են և մեր հրետանին, և տանկարին պարկը, և ալիքացիան ու խոստովանում ենք, վոր մենք հատկապես համարելու աշխատելու մեջ առաջընկած են։ (Ծափահարություններ)։

Մենք մեր խոչոր նվաճումն ենք համարում այն, վոր հաշվեառ շրջանում Բանվորա - Գյուղայիական կարմիր բանակի տեխնիկական սպառազինություն գգալիորեն աճել ե։ Այդ յերեւում է թեկուղ և հետեյալից՝ համեմատած Խորհրդների անցյալ համարքում ժամանակակարգանի հետ, մեր բանակի յուղումարի ժամանակաշրջանի հետ, մեր բանակի յու-

րաքանչյուղը կարմիր բանակայինին ընկնող մեխանիկական սպառազինումը (մեխանիկական ձիու ուժի քանակը) աճել է չորս անգամ։ (Ծափեր)։ Շնորհիվ ընկնի Ստալինի կողմից այդ գործին ցուցաբերվող բացառիկ ուշադրությամ, մենք խոչոր հաջողությամբ կատարեցինք այլ գործը։ (Բուռն ծափեր)։

Մենք ստիպված յեղանք ավելացնել կարմիր բանակին առևտրական թվական կազմը։

Այս ամենը մեզ հեշտությամբ չհաջողվեց և եժան չնատեց։ Վերհշեցնեք այն, վոր կուսակցությունն ու կառավարությունն ուղղակի ստիպված յեղան հայտարարել, թե արդյունաբերության առաջին հնդամյակի վորոշ թերակատարումը կազմված եր ուժեղացըրած պաշտպանողական աշխատանքների անհրաժեշտության հետ։

մասին թեկուզ կարարդինո-Բալկարյան մարզի կոլտընտեսականներին և, իհարկե, վոչ միայն այդ մարզի կոլտնտեսականներին : Մինչդեռ կապիտալիստական յերկրներում և իմպերալիզմի ճնշման տակ գոնզող գաղություններում ու կիսազարդություններում հարյուր միլիոնավոր գյուղացիներին բղկտում և ճշնաժամը և շատ գյուղական աշխատավորներ սովամահ են լինում, մեր գյուղերում վերջ և տրված աղքատությանը և աղնիվ աշխատավորի համար ճանապարհ և բացված գեպի լավ կյանքը :

Մեր յերկրում կենցաղային սպայմանների արմատական բարելավման ցուցանիշն և հանդիսանում աշխատավորների առողջության ամբացումը :

Վորքան ել թերություններ ունենան մեր բուժական հիմնարկները, այնուամենայնիվ աշխատավորների համար նրանց ունեցած այժմյան նշանակությունը չի կարելի համեմատել մինչ-հեղափոխական անցյալի հետ : Բավկական ե, յեթե ասենք, վոր բանակ կանչված բանվորների բժշկական քննությունը Մոսկվայում, Լենինգրադում, Մոսկվայի ու Խվանովոյի մարդերում, Գորկու յերկրում և Ուկրաինայում ապացուցեց, վոր նըրանց միջին քաշը վերջին վեց-յոթ տարում ավելացել ե 1-2 կիլոգրամով, իսկ կրծքի վանդակի շրջադիմն ավելացել ե 1,5 սանտիմետրից մինչև 2,5 սանտիմետր : Թող մեզ նույնպիսի տվյալներ բերեն արտասահմանի գրության մասին : Բայց մենք հենց պետք ե վոր ամրակուռ մարտիկներ ունենանք Խորհուրդների իշխանության համար : (Ծափեր) :

Կուսակցությունը և կառավարությունն անհրաժեշտ գտան ընթացիկ տարում դդալի չափով ավելացնել հիվանդանոցների և ամբողջ բուժկաղմի աշխատավարձի ծախսերը : Մենք ուզում ենք, վորպեսզի առողջապահության դորձն ավելի արագ առաջ գնա, վորպեսզի աշխատավորության առողջությունն ամրանա, և վորպեսզի մեզ մոտ ավելի մեծ թվով խորհրդային հականեր ծնվեն : (Յերկարածն ծափեր) :

Մենք առաջ ենք ընթանում, սակայն մեր կենցա-

դային կարիքները դեռ հեռու յեն ինչպես հարկն և բարարվելուց : Մեղ մոտ, որինակ, շատ ճեղքվածքներ կան բնակարանային գործում և այդ գործն ամենալուրջ ուշադրություն է պահանջում : Մեղ մոտ հետ և մնացել կոմունալ տնտեսությունը, և միայն քաղաքների փոքր մասը, Մոսկվայի գլխավորությամբ, արդեն ինչպես հարկն և ճենամուխ և յեղել գործի : Համախ մեղ մոտ պակասում են ամենահարկավոր ապրանքներն ու մթերքները՝ ինչպես քաղաքում, այնպես ել դյուզում : Սակայն չի կարելի մոռանալ, վոր մենք շատ հնարավորություններ ունենք այդ գործը բարելավելու համար : Բայց մենք դեռ բարվականաչափ հմտորեն չենք ողագործում այդ հնարավորությունները : Առաջ մեղ չեն առվորեցրել այդ : Սակայն այժմ մենք նոր կյանքի կառուցման մեծ ուսումն ենք անցնում : Մենք չափազանցություններ չենք ուզում և չենք առում, թե ԽՍՀՄ-ն արգեն հարուստ յերկիր և, սակայն Խորհրդային Միության աշխատավորները զիտեն, վոր մեր յերկիրը հարստանում ե :

Վորպեսպի գանիենք այն խնդիրների բարձրության վրա, վորոնք գրել ե մեր առջև պրոլետարական հեղափոխությունը, մեղ անհրաժեշտ և կուլտուրական չինարարության բարձր վերելք : Մեր ուժն այն և, վոր այդ դարձել ե աշխատավորների լայն ժամանակի դետակցությունը : Կուլտուրայի ծարավը, ձգտումը դեպի գանիենք արինականը՝ աճում են ժամանակառում, զարթեցնելով մեծ քանակությամբ նոր ուժեր ու տաղանդներ : Աճում ե Խորհրդային Միության ժողովուրդների կուլտուրան, աճում ե խորհրդային հիմքի վրա՝ ազգային գույների ճոխ վետուրներով : Ինչ ելքարողի անդրագիտ նացիոնալիտարական ու վերնացիոնալիտարական տեսություններում, մեղ մոտ վերջին գյուղացին ել տեսնում և, վոր ազգային կուլտուրայի ծաղկման ուղին գտնվել է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության մեջ, վորը նոր կյանք և կառուցում ինտերնացիոնալիզմի դրուտակ :

Մենք աչք չենք փակում այն բանի հանդեպ, վոր մեր դպրոցները չափից ավելի լիքն են և մենք պետք ե արագորեն վերջ տանք յերկհերթ, առավել ևս յեռահերթ պարապմունքներին : Մեղ մեր աչքերը չենք փակում նաև մեր բարձրագույն ուսումնական հաստատությունների թերությունների հանդեպ, սակայն դիտենք, վոր վարչությունը շրջանում այնտեղ գործն զգալի չափով բարելավել ե, և մենք պետք ե ավելի ուժեղ թափով աշխատենք նույն ուղղությամբ : Մենք պետք ե ուժեղացնենք մեր հոգատարությունն ուսուցչի և դիտնականի նկատմամբ, ինչպես և անդիպլոմ գյուտարարությունների նկատմամբ :

Խորհրդային իշխանության անցած շրջանի մեծ հաջողությունը պետք ե համարել հին խնտելիութեացիայի մեջ դեպի սոցիալիզմ կատարված շրջադարձը : Առանց տատանումների, առանց վազվակելու և այս ու այն կողմն անցնելու չկատարվեց այդ բեկումը : Սակայն վերցրեք հին խնտեներների, ուսուցչության, վերջապես՝ զբողների ու արվեստի աշխատողների հիմնական մասսան և ձեզ հասկանալի կլինի անցյալ տարի Մոսկվայում տեղի ունեցած խորհրդային դրուների համագումարի քաղաքական նշանակությունը, մի համագումար, վորը ցայտուն կերպով արտացոլեց մեր խնտելիութեացիայի մեջ դեպի լավը կատարված այդ բեկումը :

Բայց թերեւս վոչչի հետ չի կարելի համեմատել կուսակցության և Խորհրդային իշխանության այն հաջողությունը, վորն ունենք մենք նոր խնտելիութեացիա և մանավանդ տեխնիկական կալբեր սուեղծելու գործում : Արդեն առաջին տարին չե, վոր շատ գործարանների, ինչպես և կուլտուրաությունների բախտը տնորինում են այն յերիտասարդ կաղըերը, վորոնք աճել են խորհրդային ողով և ջանասեր կերպով գործնական փորձ են կուտակում : Մի շարք տարիների ընթացքում կուսակցությունն այդ խնդրի վրա կենտրոնացրել և բանվոր գասակարգի ուշադրությունը նը : Յեվ թեմբետ գլխավոր արդյունքները դեռ մեր

առաջն են, այնուամենայնիվ նոր սերունդն արդեն մեծ ուժ է դարձել արտադրության մեջ, տեխնիկայում ու գիտահետազոտական ասպարիվում։ Լենինը ցայտուն կերպով ասել եր, թե ինչպես կապիտալիզմը «ճգմում», կործանում և դուրս եր նետում» ժողվրդի մեջ յեղող ընդունակություններն ու տաղանդները։ Դրա համար ել մեր բանվորներն ու գյուղացիները տապալեցին կապիտալիզմը։ Յեկամ ժամանակ կուլտուրայի ճանապարհը բացվեց մասսաների ու առաջին հերթին մեր յերիտասարդության համար։

Մեր այժմյան խնդիրներն ընկ. Ստալինը վերջերածեակերպեց հետևյալ հրաշալի խոսքերով։

«Քանի վոր մենք արդեն սովորել ենք գնահատել տեխնիկան, ժամանակն ե ուղղակի հայտարարելու, վոր այժմ գլխավորը տեխնիկային տիրապետած մարդիկն են... Պետք է պահպանել ամեն մի ընդունակ և ուշիմ աշխատողին, պահպանել և աճեցնել նրան։ Մարդկանց պետք է աճեցնել հոգատարությամբ և ուշադիր կերպով, ինչպես պարտիզանն աճեցնում է իր սիրած պտղատու ծառը»։

Այդ ցուցումներից պարզ է, վոր դեռ հեռու յերավարը լինելուց այն, ինչ վոր արել ենք մենք տեխնիկայի և շինարարության մյուս ճյուղերի համար նոր կարգեր պատրաստելու ուղղությամբ։ Յեկ մենք ավելի համառորեն պետք է աշխատենք այդ խնդրի վրա։ Սակայն այժմ մենք ունենք գլխավորը՝ բանվորացյուղացիական իշխանությունը, վորը պատրաստ ե ամբողջ թափով առաջ մղելու այդ գործը։

Արդյո՞ք այդ նշանակում ե, թե բոլոր դժվարությաներն անցել ենք, թե հասել ե ժամանակն անհոգ կերպով հանդստանալու, ասենք՝ «�ԻԽՈ Ա ՊԼԱՎԻԿԱԿԱՆԱ» յերգի քաղցր հնչյունների տակ։ Աշխատանքի մեջ անհոգությունն ու ինքնահոսը ձեռնտու յեմիայն մեր դասակարգային թշնամուն։

Սոցիալիզմը հաղթանակեց, բայց դեռ յերեկ քարժուական տարրերի դիմադրության բացահայտ ձակատը զգալի չափով ուժեղ եր Զախարիսկած թշնա-

մին այժմ չի հանդգնի բացահայտ կովի գուլս դալու։ Նա մեկուսացված ու վողորմելի յե, բայց լի յե մոլեգին կատարությամբ և պատրաստ ե ոգտվելու ամեն մի զենքից։ Վորքան անհուսալի յե խորհրդային իշխանության թշնամիների դրությունը, այնքան պակաս են քաշվում նրանք պայքարի միջոցների ընտրության մեջ։ Այդպիսի սլայմաններում վտանգավոր է հեղափոխական գգոնության թուլացումը։

Թշնամին կատարի յե ու ճարպիկ, թշնամին պատրաստ ե ընդունել ամեն մի կերպարանք, նույնիսկ մեր կուսակցությանը բարեկամ ձևանալ, վորպեսզի թուլացնի մեր գգոնությունը և հարված հայցնի մեր գլխին ու սրտին։ Մենք մեր շարքերից կորցրինք փառապանձ մարտիկներից մեկին՝ Սերգեյ Միրոնովիչ Կիրովին, վորին սպանեցին թշնամիները միայն նրա համար, վոր նա նվիրված եր կոմունիզմի գործին, Խորհրդային իշխանության գործին։ Զինովյելականներից առաջացած սպիտակ գվարդիական այն վիժվածքները, վորոնց դաստիարակել ե պրովոկատորական յերկերեսանիկության նողկալի «առաջնորդը», հանդիսացան այդ չափագործության կազմակերպիչները։ Թշնամու համար միևնույն ե, թե ով կլինի նրա կամքի կատարածուն, թող լինի նաև նաև կոմունիստական տոմսով աքողված մի հանցագործ, վորի թիկունքին թագնվել են մի բուռն անսկզբունք կարյերիստներ, բարձր պաշտոնների սիրահարներ։ Այդ բոլորին մեր տված պատասխանը կարող ե լինել միայն՝ հեղափոխական ուժեղ գգոնություն դաստիարակյին թշնամու հանդեպ։

Խորհրդային իշխանության թշնամիները, լենինգրադում իրենց կատարած վոճիրով, ըստ յերեւաթին, ուղում եյին չփոթություն առաջացնել մեր շարքերում։ Մի՞թե թշնամիների այդ հաշիվները ցույց չեն տալիս նրանց կատարելաւան կտրված լինելը յերկի կյանքից։ Բանվորների և գյուղացիների միլիոնավոր մասսաներն իրենց հատուկ ձեռվ պատասխանե-

ցին Լենինգրադի կրակոցին, պատսխանեցին բացառիկ ուժով, համախմբելով իրենց շարքերը Խորչբային իշխանության շուրջը, ընկ. Ստալինի շուրջը: (Բուռն ու յերկարակի ծափեր, վորոնի վոլխարկվում են ովացիայի քուրքը վոտքի յեն կանգնում): Դժվար և պատկերացնել քաղաքական ավելի մեծ ցույց հողուտ մեր գործի և ընդդեմ նրա թշնամիների:

Այդպիս ուրեմն, մեր յերկիրը, կառուցելով սոցիալիզմի հիմքը և անմիջականորեն ընդդրկելով սոցիալստական շինարարության աշխատավորների ձնչող մասսային, նեպական յերկրից վերափոխվեց սոցիալիստական յերկրի, անցնելով ՆեՊի մի շարք ետապները և դեռ այժմ ել վերջնականապես վոչչացրած շինելով նրա վերջին աստիճանները: Ժողովրդական տնտեսության վերելքի հետ միասին, տեղի յե ունենում աշխատավորների կենցաղային պայմանների ու կուլտուրայի հզոր վերելքը: Բանվորական և գյուղացիական կոլտնտեսական մասսաներն ավելի քան յերեկից համախմբված են կուսակցության շուրջը: Արագործեն աճում են սոցիալիզմ կառուցողների նորանոր կադրեր աշխատավորներից և մանավանդ կանացից, յերիտասարդությունից, որինական հպարտություն և մեծ հույսեր ներշնչելով մեղ:

Ահա այն փաստերը, վորոնի հիման վրա մենք պետք ե հիմնական յեղակացություններ անենք արդի ըրջանի մեր քաղաքականության և մեր ինտերների մասին:

Վորպեսդի չկրկնեմ այն, ինչ վոր ակնհայտորեն բջիռում ե այդ փաստերից ու մեր բոլոր ասածներից, և վորպեսդի մեր յեղակացությունների մեջ ուշադրությունը կենտրոնացնենք գլխավորի վրա, այսինքն՝ «տեխնիկային տիրապետած մարդկանց» վրա, յես կրերեմ ընկ. Ստալինի կողմից մետաղաձուլներին ուղղված հայտնի խոռոչերը:

«Հոգատարությամբ աճեցնել և վորակավորել մարդկանց, ճիշտ բաշխել ու կազմակերպել նրանց արտադրության մեջ, կազմակերպել աշխատավարձն այնպես,

վոր նա ամբացնի արտավրության վճռական ողակները և առաջ մղի մարդկանց դեպի ավելի բարձր վորպավորում — ահա թե ինչ ե պետք մեզ, վորպեսդի ստեղծենք արտադրական — տեխնիկական կարգերի բազմամարդ բանակ»:

Ընկ. Ստալինը, այդ հակիրճ խոսքերով մի քանի հիմնական հետեւություններ ե արել մեր վողջ աշխատանքների համար:

Նախ և առաջ՝ «Հոգատարությամբ աճեցնել ու վորակավորել մարդկանց» (Ստալին): Զնայած այն ամենին, ինչ արդած ե մինչև այժմ, դա մնում է մոմենտի ամենահրատապ խնդիրը:

Յերկրորդ հնգամյակի տնտեսական բոլոր խնդիրների կենտրոնում դրված է ժողովրդական տնտեսության բոլոր ձյուղերի տեխնիկական վերակառուցման ավարտումը: Մենք արդեն քիչ չենք աշխատել արդյունաբերության, զյուղանտեսության ու տրանսպորտի տեխնիկական վերակառուցման վրա: Արդեն քիչ նոր տեխնիկա, նոր արտադրություններ, նոր սարքավորում, բարդ ձեռնարկություններ չենք մտցրել մենք ժողովրդական տնտեսության մեջ: Սակայն դա միայն մի փոքր մասն ե այն բանի, ինչ վոր ցանկանում ենք մենք ունենալ յերկրի՝ տեխնիկական տեսակետից վերջնականապես վերակառուցման մեջ: Խորհրդային Միության տեխնիկական վերազինման գործում մենք առաջ ընթանում խսկապես հեղափոխական տեմպերով: Այդպես վարվերով, մենք կատարում ենք միայն աշխարհում առաջին պրոլետարական պատմական ուղղություններից մեկը:

Մյուս կողմից, արդեն մի քանի տարի յե ահա, ինչ կուսակցությունը գրել ե տեխնիկային տիրապետելու խնդիրը և նոր մեքենաներն ու արտադրությունները յուրացնելու խնդիրը, վորպեսդի գնական պորձնական խնդիր, վորպեսդի այն ամենը, ինչ մենք կառուցել ենք, վորպեսդի այն ամենը, ինչ մենք կառուցել ենք, լավ աշխատի, վոչ վատ,

ապ ավելի լազմ՝ քան կապիտալիստների մոտ։ Մեր աչքի առաջ խոչըր աշխատանք ե ծավալվել այդ խընդիրներն իրականացնելու ուղղությամբ։ Աճում և լայնանում են նոր ինժեներների, գյուղատնտեսների, տեխնիկների, արտադրության մեջ աշխատողների, կուլտուրական աշխատողների և այլ կադրերը։ Հասակ են առնում դեպի աշխատանքը նոր վերաբերմունք ոմնեցող մարդիկ և նրաց մեջ քիչ չե նոր հասարակություն կառուցող այն մարդկանց թիվը, վորոնք մինչև վերջը նվիրված են սոցիալիզմին։

Նրանց հետ միասին, շատ ավելի խոշոր արդյունքներ են ստացվում նաև մասնագետների հին կադրերի աշխատանքից։ Այսանց տեխնիկային տիրապետած մարդկանց, մեզանում ներկայում արդեն հնարավոր չե և վոչ մի լուրջ արտադրություն։ Այսանց դրան, չի աշխատում և չի կարող աշխատել և վոչ մի գործարան։ Կան և այնպիսի ձեռնարկություններ, ինչպես նաև նոր արտադրություններ, որինակ՝ սինթետիկ կառուչուկի արտադրությունը, վորի զարգացումը համարյա ամբողջովին գտնվում ե տեխնիկական նոր կադրերի ձեռքում։

Ենք անհարաժեշտ ե, վոր այդ գործը, ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի սոցիալիստական վերակառուցման արմատական ինդրին համապատասխան մարդիկ անեցնելու ու վորակալորելու զործն այժմ առաջ շարժվի ել ավելի լայն Փրոնտով։ անհրաժեշտ ե, վոր այդ կադրերի տեխնիկական վորականությունը հարկ յեղած բարձրության համնի և հետ չմնա արտասահմանյան մասնագետների վորականությունից։ Վորակավորմանը, այսինքն գիտական-տեխնիկական պատրաստության վորակին, մենք պարտավոր ենք ներկայում նվիրել այնքան ուշադրություն, վորքան հարկավոր ե տեխնիկական տնտեսական տեսակետից առաջավոր կապիտալիստական յերկիրներին հասնելու և անցնելու համար։ այդ բանին պետք ե հասնել ամենակարծեամանակում։ Աճեցնել այդ կադրերը հատկապես կուսակցական և անկուսակցական յե-

րիտասարդությունից, դարձնելով նրանց իրենց գործին նվիրված ու սոցիալիզմի գիտակից կառուցող մարդիկ, այդպես անեցնել մասնագետների նոր բանակը, — այս ե մեր ինդիբը։ Այս բանի համար չի կարելի միջոցներ և ուժեր խնայել։ ներկայումս վոչինչ այնչափ արագորեն չի հասուցվի, և վոչ մի այլ բան այնպիսի պլուղներ չի տա, ինչպես այս ինդիբի հաջող լուծուալը։

Յերկրորդը — «Ճիշտ դասավորել ու կազմակերպել նրանց (մարդկանց) արտադրության մեջ» (Ստալին)։ Այսաեղ ձևակերպված են մեր կազմակերպչական ինդիբները։ Հենց այս խնդիրներին եր, վոր կուսակցության 17-րդ համագումարը բացառիկ ուշադրություն նվիրեց։ Կազմակերպման ուժը հասկանալի յերշտական կամաց ակտուալ ուժուական համար։

Պրակտիկ շնարարության ինչպիսի հարց ել թե կուգ վերջնենք վերջին ժամանակներս, կտեսնենք, վոր կուսակցությունն ուշադրությունը կենտրոնացրել ե կազմակերպչական պլուղեմների վրա, աշխատանքի մեթոդի վրա, ապարատի կառուցման վրա, կատարման վերահսկողության վրա։ Հենց այս նշանակում ե ճիշտ դասավորել ուժերը։ Վերցնենք Դոնբասի որինակը։ Կուսակցության ու կառավարության առաջ խոչըր խնդիր ե կանոնած հասնել մեքենայացման խնդրի ճիշտ իրազորման և դրա միջոցով հարկ յեղած բարձրության հասցնել ածխի հանուցյթը։ Յերկար ժամանակվա ընթացքում այդ գործն առաջ եր շարժվում կրիայի քայլերով։ Վճռական բոպեյին կուսակցությունը կրակը կենտրոնացրեց Դոնբասի տնտեսական մարմինների աշխատանքում գոյություն ունեցող գրասենյաշկային-բյուրոկրատիկ մեթոդի, վորպես գլխավոր խոչընդոտի վրա։ «Պաշտոնատարներից» վոմանց այդ առթիվ մի լավ ձիգ տվին։ Քիչ այնպիսի պատուհան-գեկավարներ չմերկացվեցին, վորոնք սովորած լինելով աշխատել հին ձևով, վորձում ելին զարտուղի ձանապարհներով զանց առնել աշխատանքի վերակառուցման հարցը։ Պրասենեկայիններին ու բյուրոկրատնե-

ըին մի լավ գլուխ և խոշոր աշխատանք կատարելով  
բանվորական մասսաների մեջ՝ տնտեսական աշխատան-  
քում դրասենեկային-բյուրոկրատիկ մեթոդների դեմ  
պայքարելու նշանակությունը պարզաբանելու ուղղու-  
թյամբ, մենք խոչըր հաջողության հասանք: Դուքսար  
լայն ճանապարհ դուրս յեկավ, ապացուցելով այդ  
անցած տարին ածխի հանույթի պլանի լրիվ կատարու-  
մով: Սակայն, յեթե կուսակցությունը կանգ չառալ  
տնտեսական ապարատի թերությունների դաժան քննա-  
դատության առաջ, ապա իր վողջ դիրքավորումով,  
թե՛ ժամանակն ե տիրապետելու տեխնիկային, ժա-  
մանակն ե աշխատելու ըստ եյության և վոչ թե ապա-  
րատի նկատմամբ կույր վաստանություն տածելով, —  
կուսակցությունն ասում եր՝ մեր զեկավար կազմերը  
և առաջին հերթին կոմունիստները, ընդունակ են և  
կարող են տիրապետել իրենց հանձնարարված գործին,  
յեթե նրանք ձեռնամուխ լինեն այդ գործին լրջորեն,  
յեթե նրանք կանգ չառնեն այդ նոր աշխատանքի առա-  
ջին գժվարությունների առաջ: Քննադատելով թերու-  
թյունները և անողոքաբար խարազանելով բյուրոկրա-  
տիզմը պետական ապարատում, կուսակցությունը դրա  
հետ միասին համոզվում ու յետանդ եր ներշնչում սո-  
ցիալիզմ կառուցողներին, մեր կոմունիստական կաղ-  
րերին: Կուսակցության այդ գիրքավորումը մեծապես  
ոգնեց թարմ ուժերի արթնացմանը և կուսակցական ու  
անկուսակցական նոր կաղըերի առաջ քաշմանը և դրա  
հետ միասին, ոգնեց հին կաղըերի աշխատանքի վերա-  
կառուցումանը:

Մրանից հետո պարզ են վերջին ժամանակաշրջա-  
նում կատարված՝ վոչ միայն բազմաթիվ տեղական,  
այլև կենտրոնական մարմինների վերակառուցման հի-  
մունքները: Աշխատանքը սակայն չի կարելի ավարտ-  
ված համարել: Արտագրության կազմակերպչական  
հարցերին, ինչպես և ամբողջ պետական ապարատի  
կազմակերպչական հարցերին մենք հետադարձ և դրա  
պետք ե լուրջ ուշադրություն նվիրենք: Ներկայումս,  
յերբ նվաճված են բոլոր հիմնական նախադրյալները

ժողվրդական տնտեսության, նաև աշխատավորների  
կենցաղի ու կուլտուրայի բազմակողմանի վերելքի հա-  
մար, գործի ճիշտ կազմակերպումը կոմունիստաների  
գլխավոր պարտականությունն ե, զեկավարման գլխա-  
վոր խնդիրն ե:

Յերրորդ «Կազմակերպել աշխատավարձն այն-  
պէս, վոր նա ամբացնի արտադրության վճռական ո-  
ղակները և մարդկանց մզի գեղի բարձր վորակո-  
վորում» (Ստալին):

Այստեղ խոսքը վերաբերում է վոչ միայն կաղըե-  
րին, այլև բանվորների վողջ մասաւյին: Բնդզգել աշ-  
խատավարձի նշանակությունը ներկայումս դա մեր  
ամբողջ շինարարության բացառիկ հրատապ ինդիբին  
և մանավանդ, վոր մեղ մոտ մասակարարման բաշխիչ  
սիստեմում գոյություն ունեցող ավելորդ, հաճախ  
հանգագործ արհարմարհական վերաբերմունք ելին  
ստեղծում աշխատավարձի կազմակերպման հարցերի  
նկատմամբ:

Կազմակերպել աշխատավարձը, նշանակում է դար-  
ձնել վերջինս արտադրության վերելքի հիմնական իշա-  
կը, այդ նշանակում է վերջնականապես վերջ դնել  
այնպիսի կազմերին, յերբ տնտեսական այդ գործը  
վերահանձնարարում եր յերկորդական անձնափորու-  
թյունների, իսկ ինքը հետաքրքրում եր միայն «աշ-  
խատավարձի Փոնդի» ծախսման թղթե պահով:  
Կազմակերպել աշխատավարձը, նշանակում է ճանաչել  
իր բանվորներին, գիտենալ նրանց վորակավորումը,  
իր պատուի ուժում են արտադրության վճռական  
գիտենալ, թե վորոնք են արտադրության վճռական  
հակատամատերը և ուժ պետք ե խթանել առաջնի հեր-  
ժին: Աշխատավարձի այդպիսի կազմակերպումն անհ-  
նարին ե առանց արտադրության հիմունքներին տի-  
րապետելու, առանց արտադրական տեխնիկայի նշա-  
նակությունը հասկանալու: Կազմակերպել աշխատա-  
վարձը, նշանակում է բանվորական վողջ կողեկտիվի  
հանգերն ուղղել ճիշտ հունով, նշանակում է կրկնա-  
պատկել իր ուժեցը:

Վերջին յերեք տարվա ընթացքում բանվորների

Հիմնական կադրերը գործարաններում և շինարարության մեջ կայունանում ելին։ Սակայն չնայած վորմեծ չափով աճել ե նոր բանվորների հակայտական բանակի արտադրական փորձը, մենք դեռ քիչ բան ենք արել գործարանային ամուռ կադրեր կոփելու և արտադրության վճռական շրջաններն ապահովելու այնպիսի բանվորներով, վորոնք ինչպես հարկն ե գիտեն իրենց գործը, իրենց սարքավորումը և իրենց պարտականությունները։ Զի կարելի մոռանալ նաև այն, վորը բանվորների հին կադրերը ևս հաճախ ստիպված են լինում նորից սովորել, քանի վոր նոր տեխնիկան նրանց քիչ ե հայտնի։

Խորհրդային իշխանության աշխատավարձի քաղաքականության ձգումն ե բարձրացնել բանվորների վողջ մասսայի կյանքի մակարդակը, այդ՝ այսպես ասած, նրա հիմունքների հիմունքն ե։ Սակայն միայն դատարկախոս-ոպորտունիստները, այդ հիման վրա կարող են աշխատավարձի մեր քաղաքականությունը փոխարինել մանր-բուրժուական հավասարեցման քաղաքականությամբ, հաշվի չառնելով աշխատանքի արտադրողականությունը, հաշվի չառնելով աշխատողի վորակավորումը։ Բոլցեկեյան քաղաքականությունը փնռական պայքար ե պահանջում «հավասարարների» դեմ, վորպես զասակարգային թշնամուն ողնողների, վորպես սոցիալիզմին թշնամի տարրերի դեմ։ Վերջի-վերջո սոցիալիզմի գլխավոր ինդիրն ե՝ բարձրացնել աշխատանքի արտադրողականությունն այնպիսի աստիճանի, վորն անմատչելի յե վորեե և այլ հասարակարդի համար։ Առանց դրան, սոցիալիզմը հաղթել չէ կարող։ Ազայական-արհամարդական վերաբերմունքն աշխատավագւճի կազմակերպման նկատմամբ, գործնականում այդ նույն մանր բուրժուական հավասարեցման մնացորդների դիրքունքն ե։ Գիտական բանվորներն այն բանին, վոր յուրաքանչյուր բանվոր հասկանա, թե աշխատանքի բարձր արտադրողականության համար, ավելի պատասխանատու բնադրավառում կատարվող

աշխատանքի համար, լավագույն վորակավորման համար պետք ե լինի ավելի բարձր աշխատավարձ։ այն ժամանակ մեր արդյունաբերությունը կածի ե'լ ավելի արագորեն, ապրանք կլինի լիառատ չափով և կշահի վողջ բանվոր դասակարգը։

17-րդ համագումարում ընկ. Ստալինը պարզաբանեց, թե ինչո՞ւ տվյալ չընանում կոլտնտեսային շինարարության հիմնական ձևն ե գյուղատնտեսական արտելը և վոչ թե կոմունան, վորին հասնելու չափ մենք դեռ չենք աճել։ Զե՞ վոր պարզ ե, վոր ներկայում միայն արտելում կոլտնտեսականների անձնական շահագուությունը ճիշտ միահյուսվում ե հասարակական կոլտնտեսային շահերի հետ, իսկ դրանով ե միայն, վոր կարելի յե առաջ մղել կոլտնտեսային գործը։ Կոլտնտեսությունը (արտելը) և վոչ թե կոմունան ե վճռում ներկայումս գյուղատնտեսության վերելքը և այդ ուղին ե միայն տանում դեպի սոցիալիզմի հաջողությունը գյուղում, ապահովելով առանձին կոլտնտեսականի և ամբողջ կոլտնտեսության շահագիտի միահյուսում, վորն առաջ ե մդում կոլտնտեսաձեւ և արագորեն բարելավում ե կոլտնտեսաձեւը։ Կոմունաների մանը բուրժուական հավասարեցումից հրաժարվելով և արտելային կոլտնտեսական տնտեսության անցնելով ե միայն, վոր կոլտնտեսությունների վողջ մասսան մտավ տնտեսական առողջ վերելքի, դիտցիպլինայի ամրացման և աշխատանքի արտադրողականության բարձրացման հունը։ Պայքար մղել հավասարեցուցիչ տրամադրությունների դեմ կոլտնտեսություններում, դա ներկայումս նույնդեմ կոլտնտեսություններում, դա այժմ ետք ինչպես ինդիրի ե, ինչպես և ամեն մի այլ պես այժմ ետք ինդիրի իր մասին մի ամեն կոլտնտեսական գիտակցության մեջ։

Յեվ այժմ, յերբ նեՊ-ն արդեն դարձել ե վոչ թե նոր, այլ հին տնտեսական քաղաքականություն, մեր կոլտնտեսություններում, դա ներկայումս նույնդեմ կոլտնտեսություններում, դա այժմ ետք ինչպես ինդիրի իր մասին մի ամեն մի ամեն կոլտնտեսական գիտակցության մեջ։

արտադրության մեջ անձնական շահի և հասարակական ոգուածի ճշշա միահյուսման հարցը կենտրոնական հարց և սոցիալիզմի կառուցման գործում։ Աստահամբել աշխատավորների նյութական դրության և դրա հետ միասին աշխատանքի ընթանուր բարձրացումն արտադրության կարևորագույն ողակներում, խրախուսել առանձին աշխատողների աշխատանքի բարձր արտադրողականությունն ու վորակավորումը՝ ավելացնելով աշխատանքի վարձարարությունը, և դրա վրա կառուցել մեր աշխատավարձի քաղաքականությունը — այս և մեր խնդիրը։ Այս խնդիրի ճիշտ լուծումը լավագույն յերաշխիքն է, վոր մենք հաջողությամբ կհաղթարենք մեր ճանապարհին ըոլոր ու ամեն տեսակի խոչընդուները։

\* \* \*

Հոկտեմբերյան հեղափոխությունը դուրս բերեց մեր յերկիրը համաշխարհային կապիտալիզմի սիստեմից և նոր եջ բաց արեց համաշխարհային պատմության մեջ։ Այս յերկիրը, վորը ցարիզմի իշխանության տակ վեր եր ածվել «ժողովրդների բանտի», 1917 թվականի հոկտեմբերյան որերեց ակնած դարձավ համաշխարհային պատմության առաջապահ դիրքը։

«Ամենքին անհայտ» բոլշևիկները — այլպիսին եր ուղղում դարձնել նրանց բուրդուագիւն — «հանկարծ» ուժ դարձան և ներկայումս վոչ վոր համաշխարհային պրոցեսին այնպիսի ողնություն չի ցույց տալիս, ինչպես մեր բոլշևիկյան կուսակցությունը, ինչպես մեր բանվորա-դյուլացիական իշխանությունը։ (Ծափահարություններ)։

Այլպիս շրջվեց դործն այս պատմական ժամանակարգական այլառում։ Կարելի<sup>9</sup> յե արդյոք դրանից հետո սովորել, վոր Խորհրդավորն իշխանության նկատմամբ միատեսակ վերաբերումն կունենան ինչպես բանվորները, այսին ել բուրդուանիները, ինչպես կոլտնտեսականները, այնպես ել կուլտակները, ինչպես աշխատավորները դաշտությունում, այնպես ել իմպերիալիստները։

Չենք տեսնում արդյոք հակառակը՝ վոր կապիտալիզմի և մեր սեփական յերկրում յեղած նրա մնացորդները նորանոր գրոհներ են գործում Խորհրդադիների իշխանության վրա։

Խորհրդային իշխանության հակառակորդները բուրժուատական և մենչեւիկա-սոցիալիստական մամուլից, զեռ հաճախ ասում են՝ վո՞չ Խորհրդային Միությունը սոցիալիզմի յերկիր չե, այլ ինչ վոր բոլորովին այլ բան։ Իրենց միխթարելու համար նրանք կրկնում են «պետական կապիտալիզմի» մասին յեղած չերյուրանքները, չերյուրանքներ, վորոնց իրենք ել չեն հավատում։ Յեվ ո՞վ կհավատա այն բանին, թե լինում ե կապիտալիզմ՝ առանց կապիտալիստների, կապիտալիզմ՝ առանց ճգնաժամերի, կապիտալիզմ՝ առանց գործադպուրկների։ Յերեք պարունայք կապիտալատները չուտով կուրս կվանդեն իրենց՝ մամուլից այդ բոլոր գտարարկախոսներին, վորպես բավականին տիմար զրպարտիչների սոցիալիզմի հասցեյին։ Մեր կողմից մենք մի բան կցանկանայինք, վոր բանն վորներն ինչպիսի տարածությունը ել թեկուզ բաժանված լինեն մեզանից, ավելի շատ բան գիտենան Խորհրդային Միության մասին, նոր կյանքի կառուցման ասպարիլում մեր ունեցած բոլոր դժվարությունների ու հաղթնակների մասին։ Այժմ մենք այդ բան ցանկանում ենք առավել ևս, քանի վոր «Ռուսաստանի գարձել և սոցիալիստական»։

Մեր պետական ապարատը, վոր իր բոլոր թերություններով հնարավորություն և տալիս մեզ իրականացնելու սոցիալիստական շնարարության մեծ պլանը, թշնամիներն անշնորհ կերպով նկարագրում են վորպես բյուրոկրատական մի վերնաշնք, վորը համատեղելի չե առանձին մարդկանց ու տաղանդների դարպացման շահերի հետ։ Սակայն բյուրոկրատիզմի այդ «քննադատությունը» միայն քողարկում ե թշնամիների խակական նպատակը, այն ե՝ վիճեցնել Խորհրդային իշխանության առարարը, վորը կառավարում ե յերկրի վիթխարի տնտեսությունը հոգուտ աշրում և յերկրի վիթխարի տնտեսությունը հոգուտ

խաստավորների, վորը փոխարինելու յե յեկել բոլոր այդ խոշոր ու մանր տիրուկներին, վորոնք առաջ իսկապես «զարգանուամ եյին» և ապրում եյին իրենց ցանկացածին պես, սակայն ի հաշիվ գյուղացիների ու բանվորների, ի հաշիվ աշխատավորների շահագործման: Մենք լավ ենք հասկանում, վոր իսկական պայտարը բյուրով կրատիզմի դեմ անբաժանելի յե սոցիալիզմի հաղթանակի համար մղվող պայքարից և, ինչպես քաղաքում, այնպես ել գյուղում խոշոր արտադրության զարգացման հաջողությունների ու մասսաների կուլտուրականության աճման հետ միասին հսկայական չափով աճում են մեր հնարավորությունները բյուրով կրատիզմի հաղթահարման դորձում: Ավելի ներգրավել աշխատավորներին մեր մարմինների աշխատանքին և կուսակցության զեկավարությամբ ել ավելի ակտիվացնել նրանց մասնակցությունը՝ մեր պարատի բյուրով կրատիկ խեղաթյուրումների դեմ մղվող պայքարին — սրա մեջ ենք տեսնում մենք մեր կարեռագույն խնդիրներից մելք, գիտենալով, վոր այդ ե սոցիալիզմի լիակատար հաղթանակն արագացնելու վատահելի ուղին:

Բուրժուական յերկիրներում, վորաեղ փոքրամասնությունը — շահագործողները — իշխում ե մեծամասնության վրա, աշխատավորների վրա, պետական իշխանության մարմինները ձգտում են թագանել մասսաներից իրենց իսկական դասակարգային նշանակությունը, վորպես կապիտալի պահպանության մարմիններ ընդդեմ աշխատավորների շահերի: Բուրժուազիան ստիլված ե իր գիտատուրան թագանել պառաւմնենտարիզմի զանազան ձևերի տակ և մասսաներին հեռու պահել իր կառավարչական ապարատից: Նույնիսկ Փաշխատական տիպի պետություններում, վորոնք բացահայտուեն կոչված են աշխատավորներին սարսափի ու հնազանդության մեջ, կապիտալիզմի կոչելի տակ պահելու, բուրժուազիան իր դիկտատուրայի ժանիքները յերկուտությամբ թագցնում ե իրը թերնակչությունից ընտրված զանազան ներկայացուց-

չությունների վարագույրի հետեւ: Յեկ այդ հասկանալի յե: Մերկացված բուրժուական դիկտատուրան նույնիսկ դեմոկրատական կեղեւի տակ կորցնում ե աշխատավորության աչքում իր ամեն մի հեղինակությունը, վորպես աշխատավորների համար կատարելապես խորթ ու թշնամական իշխանություն:

Միայն պրոլետարիատի դիկտատուրան, վորը մարմնավորում ե իր մեջ բանվորների ու գյուղացիների դաշնքը՝ բանվոր գասակարգի ղեկավարությամբ, հանդիսանուամ ե աշխատավորության իշխանությունը, մի դիկտատուրա, վորը վոչ միայն վոչինչ չունի վախենալու աշխատավորներից, այլ ընդհակառակը, իր ուժը տեսնում ե աշխատավոր մասսաներին կատարած մասն վողջ գործում ակտիվ մասնակցության ներգրավելու մեջ: Միայն այդպիսի դիկտատուրան, ջախջախելով բուրժուական մեքենան նրա հիմքի՝ մասնակոր սեփականության հետ միասին, և իր աշխատանքի անկյունագրաբը գարձնելով հասարակական սեփականության զարգացումը՝ հոգուտ աշխատավորության շահերի, միայն այդպիսի դիկտատուրան, կարող ե կառուցել նոր հասարակությունն, հասարակություն՝ առանց գասակարգերի, վորը հնարավորություն կտա հասցնելու ժողովրդի բարեկեցությունն ու կուլտուրան իսկապես բարձր մակարդակի: Մենք պատրաստ ենք ընդունելու, վոր մեր կարգերում զեռևս շատ մանր ու խոշոր թերություններ կան, սակայն այդ կարգերի հիմքը՝ հասարակական սեփականությունը և աշխատավորների իշխանությունը՝ մեծ ու անպարտելի ուժ: (Ծափակարություններ):

Մեր խորհուրդները պրոլետարիատի դիկտատուրայի մարմնացնում են: Վորպես աշխատավորների իշխանության մարմիններ նրանք պետք ե հոգ տանեն պահպանելու նախ և առաջ հասարակական, պետական ու կոռուպտատիվ-կոլտնտեսային մեփականության սմբացման և սոցիալիստական որինականության շահերը:

Վորպես իշխանության մարմիններ, նրանք պետք

Է աշալրջությամբ դիտեն ու չեշտակիսրեն հարվածեն  
թշնամու գործակալներին և դրա հետ միասին զգայուն  
ու հոգետար վերաբերմունք ցուցաբերեն կենդանի  
մարդկանց, յուրաքանչյուր աշխատավորի:

Այս ամենից պարզ է, թե ինչպես պետք է հոգ  
տանենք մենք խորհուրդների աշխատանքը բարելավելու  
մասին:

Մեզ հարկավոր է, վոր ե՛լ ալելի ծավալվի խոր-  
հուրդների սեկցիաների, ճենարկությունների պատ-  
ղամավորական խմբակների, հիմնարկների չեփական  
խմբակների ու սոցհամաստեղության կարգով աշխատող-  
ների աշխատանքը, վորովեսպի խորհուրդներն ե՛լ ավելի  
ամուր կապվեն բանվորական մասսաների հետ: Մեզ  
հարկավոր է, վոր քաղաքային խորհուրդները, կատա-  
րելով իրենց պարտականություններն ինդուստրացման  
ու տեխնիկական վերակառուցման քաղաքականության  
կիրառման գործում, ուժեղացնեն իրենց հոգետարու-  
թյունը բանվորների ու բանվորությաների կենցաղային և  
կուլտուրական կարիքների նկատմամբ, աշխատեն ա-  
ռևտրի ու բնակարանային գործը բարեխայելու վրա,  
բարելավեն գործը դպրոցներում ու հիմնադատոցնե-  
րում, բարելավեն կինոներն ու գրադարանները, կարդ  
ու կանոն ստեղծեն բազմիքներում և ֆիզկուլտ հրա-  
պարակներում և անշեղորեն բարձրացնեն բանվոր հե-  
րիտասարդության՝ սոցիալիզմի այդ մեծ ուժի աշխա-  
տանքային վորակավորումն ու քաղաքական գաստիա-  
րակությունը:

Մեզ հարկավոր է, վոր մեր գյուղխորհուրդներն  
ինչպես հարկն է կապակցեն իրենց աշխատանքը կոլտըն-  
տեսային գյուղի վերելքի հետ, կոլտնտեսությունների  
ու խորհուրդների միջոցով ողնեն գյուղատն-  
տեսության վերելքին ու կոլտնտեսականների կուլտու-  
րական աճմանը, զարգացնեն հիմնադատոցին ու  
դպրոցական գործը, առաջունեն լայն մասսաներին  
զգով, թերթերով ու կինոյով, ճանապարհներ ու  
հեռախոսներ անցկացնեն գյուղերում և դարձյալ ամեն  
կերպ հոգ տանեն ստեղծելու աշխատանքային վորակա-

վորում և քաղաքական դիումակցություն յերիտասար-  
դության մեջ, վորը մեր ապագան և հանդիսանում:

Հասցնելով խորհուրդների աշխատանքը քաղաքում  
և դյուլում այնպիսի բարձրության, վոր նրանք ար-  
ժանի լինեն սոցիալիստական պետությունը, մենք կամ-  
րապնդենք խորհրդային իշխանությունը և կապահո-  
վենք մեր ամբողջ գործիքությունը:

Խորհրդային ահամանադրությունն ընդունվեց գեռ  
1918 թվականին: Լենինի կողմէց գրված խորհրդային  
սամանադրությունն աշխատավորների գրութ դարձակ  
սոցիալիզմի համար մզկող պայքարում: Այդ գրութ  
տակ մենք հսկայական չափով առաջ գնացինք: Խոր-  
հրդային սահմանադրությունն իր հետագա զարգա-  
ցումը գտավ խորհրդային սոցիալիստական հանրապե-  
տությունների Միություն ստեղծվելիս ընկ. Ստալինի  
կողմից մշակված՝ ԽՍՀՄ-ի «Հիմնական որենք» տեք-  
ստի մեջ: Այն ժամանակվանից, սոցիալիզմի հաջո-  
ղությունները հսկայական փոփոխություններ մտցրին  
մեր յերկրի հասարակական ամբողջ կառուցվածքի մեջ,  
ակայն այդ փոփոխությունները դեռ չեյին կարող  
արտացոլում գտնել մեր սահմանադրության տեքստի  
մեջ: Դրա համար ել խորհրդային սահմանադրությու-  
նը պետք է յենթարկվի այնպիսի վերամշակման, վոր  
նրա մեջ ամբացվեն Հոկտեմբերյան հեղափոխության  
այնպիսի նվաճումներ՝ ինչպիսիք են Կոլեկտիվ տնտե-  
սածեկի ստեղծումը, կամլիտալիստական տարբերի վե-  
րացումը, սոցիալիստական սեփականության հաղթա-  
նակը Խորհրդային Միության մեջ: Մեր սահմանա-  
դրության մեջ պետք է արտացոլվեն նաև խորհրդային  
գենուկրատիզմը մինչև վերջը զարգացնելու ինդիքնե-  
րը, պետության կառավարման մեջ աշխատավորների  
մասնակցության ինչպես հին, այնպես և նոր ձևերի  
զարգացման ինդիքները: Ամբողջությամբ արտացոլել  
սոցիալիստական նոր հասարակության հաջողություն-  
ները մեր սահմանադրության մեջ և դարձնել վերջինս  
խորհրդային գեմոկրատիզմի հետագա բարձակողմանի  
զարգացման հիմքը և դրանով հեռանկար բանալ վող

սոցիալիստական շինարարության համար—այս և մեր խնդիրը:

Անհրաժեշտ է, վոր խորհուրդների 7-րդ համագումարն իր ծանրակշիռ խոսքն ասի այդ հարցի առթիվ:

Դժվար չե հասկանալ բանվորների ու գյուղացիների հանրապետության հասուլ դրությունը, քանի դեռ աշխարհում գոյություն ունի միակ խորհրդային պետությունը։ Սակայն յեթե կապիտալիզմի սիստեմը ծվատվում է ավելի ու ավելի ուժեղ հակասություններից և կողքից դիտողի համար ավելի ու ավելի տեսանելի յե դառնում, վոր նա արդեն այնքան ել ամուր չի կանգնած իր սեփական վոտքերի վրա, ապա մեր բարեկամներին մենք կարող ենք ասել, թե Խորհրդային Միությունն այժմ՝ ավելի քան յերբեք՝ մեծ և իր տնտեսական հզորությամբ և աշխատավոր մասսաների համախմբվածությամբ Խորհրդային իշխանության չուրջը։ (Ազմկալից ծափահարություններ):

Այդ բանի համար, մենք պարտական ենք նախ և առաջ մեր կուսակցությանը, վորը վողջ սոցիալիստական շինարարության հոգին և հանդիսանում: Մարքսիզմ-լենինիզմի ծածանվող դրույվ առաջ և ընթանում մեր կուսակցությունը՝ վողեռելով կոմունիզմի մարտիկներին. միլիոնավոր մասսաներին առաջ և տանում մեր Ստալինը, և մենք հաստատապես պիտենք՝ այդ և մեր լիակատար հաղթանակի ուղին։ (Բուռն ու յերկարակ ծափեր, վորոնե վիխարկվում են ովացիայի: Բոլորը վուտի յեն կանգնում: Բացականչություններ՝ «Կեցցե՛ մեծ Ստալինը. ուռուա: Կեցցե՛ ընկ. Մոլտովը»):

### ՅԵԶՐԱՓԱԿՄԱՆ ԽՈՍՔԸ

(Համազումածի պատվիրակները բաւան յեկարտածեց ծափերով և գիմազորում բնկ. ՄՈԼՈՏՈՎԻՆ, յեր նա հանդես և գալիս ամբիոնի վրա)

— Բնկերնե՛ր, այն յելույթները, վորոնք տեղի ունեցան համագումարում կառավարության հաշվետու զեկուցման չուրջը, ցույց տվին, վոր Խորհրդային Միության բույր հանրապետությունների ու շրջանների պատվիրակությունները կատարելապես համերաշխ են կառավարության արտաքին ու ներքին քաղաքականության հետ։ (Բուռն ծափեր): Ուստի, յես շատ հակիրճ կլինեմ իմ յեղրափակման ճառում։

Այսոր մեր թերթերում հարաբերակված և Տոկիոյից ստացված մի հեռագիր, վորը հաղորդում և արտապատճեն գործերի մինիսար պարոն Խիրոսիայի ճապոնական քին գործերի մինիսար պարոն Խիրոսիայի ճապոնական պառլամենտում ունեցած յելույթի մասին՝ համապես պապոնիայի և ԽՍՀՄ-ի փոխհարաբերությունների ձապոնիայի։ Այդ ճառերում պարոն Խիրոսիան հայ-հարցի չուրջը։ Այդ ճառերում պարոն Խիրոսիան հայ-հարցի տարրաբել է, թե նա «մտադիր ե առավելագույն չափով ստարաբել է, թե նա մտադիր ե առավելագույն չափով ստարաբել բարեկամությունը ԽՍՀՄ-ի հետ» և «արախրախուսել բարեկամությունը ԽՍՀՄ-ի հետ»։ Պատացնել խորհրդային-ճապոնական հարաբերությունների իսաղաղ զարգացումը, կրկնապատկելով իր ջանքերը մյուս չարցերը լուծելու համար։ Մենք վողջունում ենք այդ հայտարարությունները, վորոնք համապատասխանում են նաև մեր դիտավորություններին։

Սակայն պարոն Խիրոսիան անհրաժեշտ է համարել,

բացի դժբանից, կանու առնել պաշտպանողական այն բուլոր ձեռնարկումների վրա, վորոնք, ինչպես հայտնի յեւ, հարկադրված եյխնք մենք ձեռնարկել Հեռավոր Արեվելքում մեր առաջմանները պաշտպանելու համար։ Բնդամին նա հենվել է Պորտամուտի պայմանագրի վրա, վորը կնքվել եր 1905 թվականին, ոռուս-ճապոնական պատերազմից հետո։

Աչքի անցկացնենք Պորտամուտի պայմանագիրը։ Այդ պայմանագրի յերկրորդ հոդվածն ասում է. «Վորուս թյուրիմացությունից խուսափելու համար պայմանավորվող բարձր կողմերը (այսինքն Ռուսաստանը և Ճապոնիան) ձեռնպահ կմնան ոռուս-կորեական սահմանագլխին սաղմական այնպիսի մթջոցներ գործադրելուց, վորոնք կարող են սպառնալ ոռուսական կամ կորեական տերիտորիայի անվտանգությանը»։ Նույնանըման պարտավորություն կա 9-րդ հոդվածում։ Սախալին կզգու յերկու մասերի միջև ընկած սահմանի վերաբերմամբ։

1925 թվականի հունվարի 20-ին Պեկինում Ճապոնիայի հետ կնքած մեր համաձայնության հիման վրա Պորտամուտի պայմանագիրը մինչև այժմ ել պահպանում եր պարտադիր ուժը ճապոնիայի և ԽՍՀՄ-ի միջև։

Բոլորին հայտնի յեւ, վոր ԽՍՀՄ-ն խօսիվ կատարում է Պորտամուտի պայմանագրի բոլոր վորոշումները, ինչպես և, առհասարակի իր սահմանած բոլոր միջազգային պարտավորությունները։ Այդ վերաբերում ե մասնավորապես նաև յերկրորդ ու իններորդ հոդվածներից բղինող պարտավորությանը՝ չամրացնել կորեայի ու Հարավային Սախալինի մեր սահմանները։

Դարսն Խիբուտան հունվարի 22-ին և 25-ին իր արտասահմած ճառերում այն կարծիքը հայտնեց, վոր Պորտամուտի պայմանագրի այդ պարտավորությունները տարածվում են նաև խորհրդային-մանջուրական սահմանի վրա։ Սակայն, ինչպես հայտնի յեւ, Պորտամուտի պայմանագիրը վոչ մի խոսքով չի շոշափում

խորհրդային-մանջուրական սահմանի պաշտպանողական ամրությունները։

Բայց պարուն Խիբուտան, չենպելով Պորտամուտի պայմանագրի վերահիշյալ հոդվածների վրա, ըստ յերեվութին, մոռացել է նույն պայմանագրի մի քանի այլ հոդվածների գոյությունը։ Այդպես, որինակ՝ այդպայմանագրի յերկրորդ հոդվածը Ռուսաստանի և Ճապոնիայի համար պարտավորություններ և սահմանում։ 1) «Բոլորովին ու միաժամանակ եվակուացիայի յենթարկել Մանջուրիան, բացի այն տերիտորիայից, վորի վրա տարածվում և Լյատուռն թերակղզու վարձակալությունը» (Պորտ-Արտուրը և Դայլընը) և 2) «վերաբարձնել ինքնիշխան կերպով կառավարելու՝ լիովին ու ամրող ծավալով՝ Մանջուրիայի այն բոլոր մասերը», վորոնք խաղաղ պայմանագրի կնքվելու պահին գրավված եյխն ոռուսական կամ ճապոնական զորքերի կողմից։

Ապա, յոթերորդ հոդվածի համաձայն, Ռուսաստանը և Ճապոնիան պարտավորվեցին «Մանջուրիայում իրենց պատկանող յերկաթուղիները շահագործել բացառապես առևտորական ու արդյունարերական նպատակներով, բայց վոչ մի գեպքում ուղղմական նպատակներով», ընդուրում վերապահում և արված, վորայդ սահմանափակումը չի վերաբերում Լյատուռնի թերակղզում գտնվող յերկաթուղուն։

Վերջապես, Պորտամուտի պայմանագրի յերրորդ հոդվածի լրացուցիչ հոդվածն ասում է, վոր Ռուսաստանը և Ճապոնիան, իրենց յերկաթուղագծերը պահանջներու համար կարող են Մանջուրիայում պահել ամենաշատը 15 հոդի մի կիլոմետրի վրա, ընդուրում հատկապես վերապահում և արված, վոր այդ նպատակի համար յեղած պահակների թիվը պետք է սահմանվի՝ «ըստ հնարավորության պակաս քանակությամբ, համաձայն խսկական պահանջների»։

Բոլորին հայտնի յեւ, վոր ԽՍՀՄ-ն վոչ միայն լրիվ կատարեց այդ պարտավորությունները, այլ նույնիսկ ավելին արեց, քան պահանջում է Պորտամուտի պայ-

մանագիրը : Այդ յերեսում են նրանից , վոր չնայած Խորհրդային Միությունը , Պորտուգալիայի պայմանագրի համաձայն , իրավունք ունի Զին-Արեվելյան յերկաթուղում , վորի յերկարությունը հասնում է ավելի քան 1700 կիլոմետրի , պահելու 25,000-ից ավելի զորք , նա կամավոր կերպով հրաժարվեց այդ իրավունքից և Հյուսային Մանջուրիայում վոչ մի զինվոր չի պահում :

Իսկ ձապոնիա՞ն : Բավական ե՛ ամենաթռուցիկ հայացք ցցենք Պորտուգալիայի պայմանագրի վերոհիշյալ հոդվածների վրա և կտեսնենք , վոր այդ հոդվածները բոլորովին մոռացության ե տվել ճապոնական կողմը և վոչ մի չափով չի պահպանում դրանք Մանջուրիայում :

Ինչ վերաբերում ե չհարձակվելու պակախին , ապա պետք ե համաձայնել պարոն Խիրոստայի հետ , թե սոսկ չհարձակվելու պայմանագրի կենքումը չի լուծում Հեռավոր Արևելքում խաղաղություն ապահովելու հարցը : Դրա հետ միասին , չի կարելի չընդունել , վոր այդպիսի պակտ կնքելուց հրաժարվելը վերին աստիճանի բացասական յերեսություններում , վորովհետև այդպիսի հրաժարումը չի նպաստում ամրացնելու վստահությունն այն կողմի խաղաղ դիտավորությունների նկատմամբ , վորը հրաժարվում ե չհարձակվելու պարտավորություններ ստանձնելուց :

Կարիք չկանգ առնելու առանձին ընկերությ համագումարում ունեցած յերեսիների վրա : Այդ ճառուրի բովանդակությունը հաստատեց զեկուցման մեջ իմ ասածները : Ընդգծում եմ միայն դրող Ավդեյենկոյի ճառը , վորը կենդանի որինակներով , յերեք մարդու որինակով , ցայտուն կերպով չետեց սոցիալիզմի համար մեր մղած պայքարի դժվարություններն ու մեծ նշանակությունը և միենույն ժամանակ խորհրդային իշխանության , մեր կուսակցության , ընկ . Ստալինի նկատմամբ ցուցաբերվող այն նվիրվածությունն ու սերը , վորով համակած են աշխատավորների միլիոնավոր մասաները : (Ծափեր) :

Արդարել , մեծ են վերջին տարիներս մեր յերկրություղի ունեցած փոփոխությունները :

17 տարի առաջ Լենինն ասել եր՝

«Սոցիալիստական իորհրդային Հանրապետություն» արտահայտությունը նշանակում է խորհրդային իշխանության վնասանությունը՝ իրականացնել անցումը դեպի սոցիալիզմը և վոչ բնակ տվյալ տեսեսական կարգերի նախաչումը , վորպես սոցիալիստական» : Այդ ժամանակից ի վեր արմատապես վերափոխվեց մեր յերկիրը՝ սոցիալիզմի հաղթանակի հիման վրա , կոփվեց նրա եկոնոմիկան և սոցիալական կառուցվածքը : Փոխվեց ժողովրդական մասսաների կյանքը , և յեթե նորը գիտելու լինենք , այժմ մենք ապրում ենք նոր աշխարհում , կատարելապես նոր պայմաններում :

Մեր արդյունաբերությունը փոխվել ե՛ յերկիրը ինդուստրացման ե յենթարկվել նրա աճման հիման վրա : Գյուղատնտեսությունը վերակառուցվել ե նոր հիմքերի վրա , կոլեկտիվիզմի ու նոր տեխնիկայի հիմքերի վրա : Մենք հսկայական վերելքի հասանք ժողովրդական տնտեսության մեջ , վորը հենց այն պատճառով ե անշեղորեն առաջ գնացել և գնում ե , վոր նրա զարգացման հիմքն ե հանդիսանում նոր իրավակարգի հաղթանակը :

Սոցիալիզմի հաղթանակը , վորը նշանակում ե հանրային սեփականության սկզբունքների հաղթանակը , արմատապես փոխեց մեր յերկրի գեմքը , դասակարգային կառուցվածքը և սոցիալական հարաբերությունները մեր պետության մեջ : Վորքան ել կառչիդասակարգային թշնամին իր հին դիրքերին , մեր շինարարությունը խարիսում ե հին հասարակության բոլոր և ամեն տեսակ հիմքերը , փոխարինելով դրանք նոր , սոցիալիստական հարաբերություններով՝ հիմնված նոր , գիտակից կարգապահության վրա : Վերակառված վուածքուածք են աշխատավորների կենցաղը և կյանքի պայմանները , տեղի յեռնենում խորհրդային կուլտուրայի արագ վերելքը , կինը նոր կյանքի յերեւում , աճում ե իր ամբողջ եյությամբ խորհրդային

յերիտասարդությունը : Խորհրդային յերկրի մարդիկ նորանոր հերոսներ են տալիս :

Վոչ միայն լարված պայքար և մղլում մեր ամբողջ կենսաձեւ վերակառուցելու համար, այլև նորանոր շարքեր վուքի յեն կանգնում բնության դեմ պայքարելու, նրան տիրապետելու համար : Արկտիկայի նըւվաճման գործում մեր ձեռք բերած հաջողությունները և արկտիկայի խիզախ խորհրդային մարդկանց ու հերոսների անունները հայտնի յեն միլիոնավորներին : Այսուել ևս տարանք առաջին հաղթանակները, վորոնք հին աշխարհի մարդկանց ուժերից վեր էլին, վորոնք սակայն խորհրդային մարդիկ յելակետ են դարձնում իրենց հետագա ավելի խոչոր հաջողությունների համար : Ստրատոսֆերին տիրապետելու համար մղլող պայքարում խորհրդային մարդիկ աչքի ընկնող տեղ գրավեցին : Յեվ բարձունքների համար մղլող այդ փառապանծ պայքարում մենք տեսնում ենք մեր ուժերի ու մեծ ձգտումների աճման արտահայտությունը :

Խորհրդային յերկրը դեռ յերիտասարդություն և եմիայն վերջերս և բացել նոր ուժերի աճման խկական ռւզին : Մեր ձանապարհին դեռ քիչ դժվարություններ չկան և գեռ մեծ են կապիտալիտմի մնացորդները մեր յերկրում : Նրանք դեռ զոյլություն ունեն խորհրդային Միության եկոնոմիկայում և սոցիալական կառուցվածքում : Նրանք առանձնապես կենսունակ են մարդկանց զիտակցության մեջ և դեռ յերկար ժամանակ զգացնել են տալու իրենց : Դասակարգային թշնամին դեռ վայր չի դրել իր զենքը և վորքան անհուսալի յեն նրա զործը, այնքան կատաղի յե դատնում կործանման դատապարտվածների փորձերը . . .

Բայց մենք զիտենք մեր ուղին և մինչև վերջը համոզված ենք, վոր մեր զործն արդարացի յե : Այդ ռւզին, Լենինի-Ստալինի կուսակցության դրոշի տակ, մենք առաջ կդնանք դեպի նորանոր, ավելի խոշոր հաղթանակներ : (Բուռն ծափեր, վորոնիք փոխարկվում են յերկարատև ովացիայի : Բացական չուրյուններ՝ «Կեցցե՛ մեր առաջնորդ ընկ . Ստալինը, կեցցե՛ ընկ . Մոլոտովը») :

ԽՍՀՄ-ի ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ VII  
ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՎԼՈՐՈՇՈՒՄԸ  
ԽՍՀՄ-ի ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ

Հաելով ԽՍՀՄ-ի Ժողովրդական Կոմիսարների  
Խորհրդի նախագահ ընկ. Վ. Մ. Մոլոտովի հաշվետու  
զեկուցումը ԽՍՀՄ-ի կառավարության գործունեու-  
թյան մասին, ԽՍՀՄ-ի Խորհուրդների VII համա-  
գումարը վորոշում ե՝

1. Հավանություն տալ ԽՍՀՄ-ի Ժողովրդական  
Կոմիսարների Խորհրդի նախագահ ընկ. Վ. Մ. Մո-  
լոտովի հաշվետու զեկուցմանը :

2. Ամբողջովին և լիովին հավանություն տալ  
ԽՍՀՄ-ի կառավարության արտաքին և ներքին քաղա-  
քականությանը և գործնական աշխատանքին :

ԽՍՀՄ խորհուրդների VII համագումարի նախագահ  
Մ. ԿԱԿԻՆԻՆ

ԽԳՀՄ խորհուրդների VII համագումարի նահանգարա-  
ն. ՅԵՆՈՒԿԻՉՆ

Մ. Ակիմ, Կ. Բերլ.  
1935 թ. հունվարի 31



ՀՀ Ազգային գրադարան



NL0219610

«Ազգային գրադարան



NL0219610